

ԲԱԳՐ ՍՏԱՅՅԻ

ՎԻՇՆԱԿԱՆ ԱՆՏԱՌԻ
ՀԵՔՅԱԹՆԵՐԸ



ՀԱՅՊԵՏՆԻՍ

1961 99
22

ԲՄ.Գ.ՐԱՏ ՍՏԱՑՅԻ

ԱՏՈՒԳՎԱԾ Է 1961 թ.

„ՎԻԵՆՆԱԿԱՆ ԱՆՏԱՌԻ
Հ Ե Ք Յ Ա Ր Ն Ե Ր Ը“

(ՆՈՎԵԼՆԵՐ)

A $\frac{T}{6061}$



946

ԳՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ

Երևան

Պատ. իմբազիր՝

ՆԱԻՐԻ-ԶԱՐՅԱՆ

Սրբազրիչ՝ ՀՐ. ԷՎՈՅԱՆ

«ՎԻԵՆՆԱԿԱՆ ԱՆՏԱՌԻ ՀԵՔՅԱԹՆԵՐԸ»

(Նովել)

Կապույտ ճեպքնթացը Թրիլիսիից Բորժում է մեկնում առաջնայան ժամը ութ և քսան րոպեին: Այդ մասին ինձ արդեն հայնտել էին Երեկոյան և ես, արեւածագից դեռ շատ առաջ շտապում էի կայարան ճեպքնթացին հասնելու համար:

Կայարանամերձ հրապարակում ինձ կանգնեցրեց բարձրահասակ, ուղղաձիգ կաղնիվածքով և նիհար, բայց չափազանց արտահայտիչ դեմքով մի զինվորական:

— Ներեցեք երիտասարդ, — ճամպրուկները դետին դնելով հարցրեց նա, — արդյո՞ք ես ճեպքնթացից չեմ ուշացել:

— Իմ կարծիքով չեք ուշացել:

— Սասցեք, ո՞ր ժամին է մեկնում:

- Ժամը ութ և քսան ընդհինիս:
- Երևի դուք էլ ճեպընթացն եք փնտրում:
- Այո:
- Այն դեպքում զնանք միասին:
- Խնդրեմ, զնանք:

Այսպես մենք ծանոթացանք: Դատելով նրա
 ուսադիրների տարբերանշաններից, նա փոխ-
 գնդապետ էր, իսկ նրա խոսելու կերթ, հանդարտ
 ու մտածված ձևը ցույց էր տալիս նրա ծանրա-
 բարո և հաստատուն բնավորությունը:

Կառահաստույցում ևս փոխգնդապետից իմա-
 ցա, որ նրա անունը Լևոն էր, ազգանունը՝ Բա-
 րիկյան, որ նա ծնվել է Դիլիջանում, բայց պա-
 տանի հասակից հեռացել է հայրենի քաղաքից,
 սովորել է Երևանում, հետո Սարատովում ու
 Մոսկվայում, ղինվորական կրթություն է ստացել
 և այնուհետև 15 տարի է, ինչ ղինվորական ծա-
 աայության մեջ է:

— Իսկ հիմա որտեղից եք գալիս, — հարցրի
 ևս նրան:

— Երևանից:

— Երևի ձեր ընտանիքն այնտեղ է՞:

Բարիկյանը կարծես հարցս չլսեց: Նա անս-

բոշ հայացքով նայեց շուրջը և գլխով ուղևորներին
ցույց տալով ասաց.

— Կարծես թե ներս ևն թողնում, գնանք:

Մենք բարձրացանք վագոն և նստեցինք լուսա-
մանուտի առաջ:

Մեր դեմի նստարանին նստեցին տարիքն
առած մի վրացուհի և սիրունասես ու նրբակազմ
մի օրիորդ, որն ինչպես երևում էր տարիքով
կն. Չ աղջիկն էր:

Երիտասարդ աղջիկը ձեռքին երաժշտական
նոտաների մի թղթապատակ ուներ, որը դրել էր
ծնկներին, իսկ ինքը մտադրադ ու լուս լուսա-
մանուտից դուրս էր նայում:

Սկզբում մենք բոլորս լուս էինք, իսկ երբ
ճեպընթացը կայարանից դուրս սուրաց՝ Բարիկ-
յանը մեր տարիքով հարևանսուհու հետ խոսակո-
ցություն սկսեց:

Պարզվեց, որ տիկինը գնում էր Բորժոմի
Ջրերում բուժվելու, իսկ նրա դուստրը չցանկանա-
լով մորը մենակ թողնել, աղեկցում էր նրան:

— Միայն չգիտեմ, թե ինչպես պետք է ա-
նհնք, — անհանդատանում էր տիկինը, — եթե Բոր-
ժոմում դաշնամուր չգտնենք, նախկին լուրջ

դժվարությունների կհանդիպի: Իսկ պատկերաց-
նում եք, երկու ամիս աղջիկը ստիպված պետք է
լինի ստեղծների՝ ձեռք չկացնել, իսկ այդ դիտեք
ինչպիսի վատ հեռանքներ կարող է ունենալ
նրա ընդունակությունների զարգացման համար:
Նա փոքր ինչ լռեց, քնքշանքով լի հայացք դցեց
աղջկա վրա և շարունակեց.

— Բայց ես հույսով եմ, որ մենք անպայման
նրա համար դաշնամուր կգտնենք: Մի՞ծաղելի է
հույս իսկ մտածել, որ Բորժումի նման կուլտուրա-
կան մի վայրում մեզ համար դաշնամուր չգտնվի,
— եզրափակեց տիկինը:

— Իսկ օրիորդը վաղուց է նվագում, — հարց-
րեց Բարիկյանը:

— Նոր է ընդունվել կոնսերվատորիա, — պա-
տասխանեց տիկինը, — բայց ես ձեզ ասեմ, նա
իր ընդունակություններով ամենքին հիացմունք
է պատճառում: Իսկ պետք է լսեք նրա նվագած
սոնատները, վալլսերը, դուք պետք է լսեք, թե
ինչպիսի հրաշք հնչյուններ են հորդում նրա
մատների տակից, երբ նա նվագում է Շտրաուսի
«Վիննական անտառի հեքիաթ»-երը՝ վալսը:

Ես նկատեցի, որ տիկնոջ վերջին խոսքի վրա

Ընտն Բարիկյանի դեմքը ցնցվեց և նրա ուրախ
տրամադրությունն ընդհանրապես մթառնեց մռայ-
լությամբ: Սակայն միայն մի ընդհանրություն
տիրեց իրեն և այս անգամ խոսակցություն
սկսեց երիտասարդ աղջկա հետ:

— Ես միայն կարող եմ հիանալ ձեր հաջո-
ղություններով, — ասաց նա:

— Շնորհակալ եմ, — ընդհանրապես շիկնելով
ասաց աղջիկը, — սակայն մայրս չափազանցում
է, — ես այնքան էլ վարժ չեմ նվազում:

Նայելով Բարիկյանին, ես ահամա խղճահա-
րություն զգացի: Նա այնքան ընկճված ու վշտա-
հար էր երևում, որ ինձ թվում էր, թե այդ մար-
դը լուռ արտասվում էր:

— Ինչքան հիշեցիք ինչ որ մեկի՞ն, — կամացուկ
հարցրի ես:

Նա լուռ նայեց ինձ, լռեց մի փոքր և կամա-
ցուկ շնչաց:

— Այո, ես հիշեցի նրան: Այս աղջիկը և
երաժշտական այս նուտաներն ինձ նորից հիշեց-
րին իմ ունեցած կորուստը: Ինչքան նայեցեք, —
նա ցույց տվեց իր կիտելի դատարկ թևը, — ես
այս պատերազմում կորցրի աջ թևս, բայց ինձ

Մնացել է ձախը, որը փոխարինում է նաև աշին:
Լավ, թե վատ, բայց փոխարինում է: Ես կուզե-
նայի կորցնել նաև ոտներս, լավ պրոտեկցիաները
միշտ էլ կարող են ոտների տեղ ծառայել: Թե, ևս
ես ինձ այ քան դժբախտ չգտայի, այնքան չտանջ-
վեի, եթե կորցնեի տեսողությունս, բայց ես
սիրտս եմ կորցրել... ասացեք, կարո՞ղ է մարդն
ապրել աշխարհում առանց սրտի: Մակայն ինչու
եմ այս մասին խոսում: Ավելի լավ է ձեզ պատ-
մեմ բոլորը և դուք կհասկանաք, թե որքան փո-
փոխակա՞ն է մարդկային երջանկությունը և որ-
քան դաժան ճակատագիրը:

Լինն Բարիկյանը սկզբում հայերեն էր խո-
սում, հետո տիկինը խնդրեց, որ նա խոսի առ-
աներեն: Փոխզուգապետը փոքր ինչ տատանվելով
համաձայնեց.

— Դուք ինձ հարցնում եք, թե մյուսեղ է իմ
ընտանիքը, — ինձ գիմեղով ասաց Բարիկյանը:—
Ես ձեզ պետք է ասեմ, — որ ես ընտանիք չե-
նեմ: Ես ունեի կին և երկու երեխա: Այժմ նրանք
չկան: Ես սիրում էի իմ կնոջը, և հիմա էլ ինձ
թվում է, այն բոլորից հետո, ինչ որ կատարվեց,
ոչ ոք չի կարող ապրել իմ սրտում առաջացած

դատարկ ու սառը խորոչում: Ես պաշտում էի իմ
երեխաներին: Եվ հիմա էլ նրանք միշտ կենդա-
նի են իմ աչքերի առաջ: Ես երջանիկ էի:

Մի ժամանակ իմ կյանքն այնքան ուրախ
ու անհոգ էր, այնքան իմաստալից, այնքան թրթ-
թռուն, որքան այդ վայլալ, որը կոչվում է «Վիեն-
նական անտառի հեքիաթները»: Ինչո՞ւ ես մտալ-
վեցի, նայելով այդ վայլաի նոտաներին: Որով-
հետև ես ժպտացիլ եմ այդ վայլաի կենսաթրթիո
հնչյունների տակ: Ե՞րբ էր այդ: Չեմ հիշում: Ինձ
թվում է, թե շատ ժամանակ է անցել այդ օրից:

Ես երիտասարդ էի, անհանգիստ, առողջ ու
գեղեցիկ, ապագայի հույսերով լի:

Ես վերադառնում էի զորանոցից, իմ ճանա-
պարհն անցնում էր քաղաքային այգու միջով:
Ես անցա այն նստարանի մոտով, որի վրա մի
աղջիկ էր նստել: Նրա ձեռքին մի գիրք կար,
բայց նա գիրքը չէր կարդում: Կամ կարդալուց
հոգնել էր և իր երազկոտ հայացքն անտառի հե-
ռուներին հառած նստել էր լուռ ու մտածկոտ:
Ես նայեցի նրան, անցա նրա կողքով, հեռացա
մի քանի քայլ և կանգնեցի: Սիրտս ուժգին քա-

բախում էր: Տարօրինակ բան: Ես պատվեցի ծա-
ռուղիով և նորից եկա այն նստարանի մոտ, որ-
տեղ նստած էր աղջիկը: Առանց երկար-բարակ
մտածելու, ես նստեցի աղջկա կողքին և փորձեցի
խոսել հետը: Սակայն առաջին իսկ խոսքը, որով
ես դիմեցի նրան, այնքան հիմար և այնքան
անկապ էր, որ աղջիկը դարձացավ:

— Ասացեք, այստեղի խմելու ջուրը սառն
է,—հարցրի ես նրան: Նա նայեց ինձ երկար ու
փորձող հայացքով և իմ հարցն անպատասխան
թողնելով, մեջքը դարձրեց ու շուռ եկավ մյուս
կողմը: Առաջին անհաջողություններն ինձ չվհա-
տեցրին: Ես նստածս տեղից վեր կացա և հան-
գիստ քայլերով գնացի նստեցի նրա դեմը: Նա
նորից մեջքով շրջվեց դեպի ինձ: Ես նույնը
կրկնեցի առանց շփոթվելու: Այն ժամանակ նա
վեր կացավ ու անխոս հեռացավ:

Հետևյալ օրը ես նրան չհանդիպեցի: Չհան-
դիպեցի նաև մյուս օրը, մի շաբաթ անց ես
նրան տեսա թատրոնի դռան առաջ և որպես հին
ծանոթի համարձակ մոտեցա նրան:

— Բարև ձեզ:— Ինձ թվաց թե նա էլ ուրախ
էր ինձ տեսնելու համար: Իմ բարեին նա պա-

տասխանեց մեղմ ժպիտով և բարձրացանք որեհն:
Այդ թե տվեց ինձ:

— Չեք ցանկանա ինձ հետ ծանոթանալ, —
հարցրի ես:

— Խնդրեմ, եթե այդ ձեզ հաճելի է: Նա ինձ
մեկնեց իր փոքրիկ ու փամփիլիկ ձեռքը և մենք
ծանոթացանք:

Նրա անունը Անտիա էր: Հիշում եմ, ես
շատ հաճանեցի այդ անունը, և մի քանի հաճո-
յախոսություններ արեցի, որից նա երեխայի
նման կարմրեց: Ես նրան առաջարկեցի մանկի
թատրոն և միասին դիտել ներկայացումը: Հա-
մաձայնվեց:

Ներկայացումից հետո ես նրան տարա մին-
չև անտառի եզրը, որտեղ գտնվում էր նրանց
տունը: Բաժանվելիս մենք պայմանավորվեցինք
մյուս օրը հանդիպել, և, հանդիպեցինք: Իրանից
հետո մեր հանդիպումներն արդեն անհադիթանա-
րելի պահանջ դարձան: Մենք բարձրանում էինք
անտառ, ժամերով թափառում անտառապատ ձա-
րի երկայնքով: Երբ մտնում էինք անտառ, թվում
էր, թե անշունչ ծառերն էլ կենդանանում էին և
թռչունների հետ միասին մեզ դիմավորում հրա-

շալի աշնափսի երգով, որը միայն անտառում
կարող է հյուսվել: Անահիտն էլ իր ձայնն էր
խառնում անտառի բնակիչների զեղզեղանքին:
Առաջին անգամ աշնանը ես հրանից լսեցի
Շարատուսի Վիեննական անտառի հեքիաթները՝
Վալլաի եղանակը: Անահիտն աշնակես բնական և
աշնակես կենդանի ձայնով էր պատկերացնում
քնից արթնացող անտառի լուսանյայծառ առավո-
տը, որ ինձ թվում էր, թե երգում է ոչ միայն
իմ կողքին կանգնած աղջիկը, այլ երգող թռչուն-
ների ամբողջ մի երամ: Այս բանը մենք հետըզ-
հետե սովորեցրան դարձրինք: Հենց որ մտնում
էինք անտառ, Անահիտն սկսում էր Վիեննական
անտառի հեքիաթները և մենք մեղ զգում էինք
երջանկության խելահեղ դիսպարտույտի մեջ:

Մի ամիս հետո ես ամուսնացա Անահիտի
հետ: Այդ կատարվեց աշն քանից հետո, երբ
Անահիտն ավարտեց երաժշտական դպրոցը: Այդ
օրն իմ կյանքի անմոռանալի օրերից մեկն էր:
Ավարտական դասարանի աշակերտներին թույլ
էր տրվել նվագել, կամ երգել, իրենց սիրած
երաժշտական օրևէ մի գործ:

Երբ հերթը հասավ Անահիտին, նա վատահ

քայլերով եկավ, նստեց դաշնամուրի առաջ,
սպասեց մի փոքր, մինչև որ դահլիճի ձայները
կլուխն, կրկին անգամ ուղղվեց աթոռի վրա և
այնուհետև դահլիճը լցվեց մարդու ամբողջ էութե-
թյունը խանդավառող վայլասային հնչյուններով:
Ես նստած էի առաջին կարգում և տեսնում էի,
թե ինչպես նրա նուրբ մատները համարյա թե
չէին կաշում, այլ սահում էին դաշնամուրի ստեղ-
ների վրայով, բայց այդ անշարժ դորժիքը կար-
ծես ինքն էլ էր պատվում «Վիեննական անտա-
ռի հեքիաթներին» դյուբախան կենսաթրթու-
թյան հասնող, իսկ տեղ-տեղ էլ հանդիսավոր
հնչյունների առկա:

Լևոն Բարիկյանն այստեղ խոսքն ընդհատեց,
լուսամուտի առաջ դրված ծխախոտատուփից հա-
նեց մի ծխախոտ և իմ վառած լուցկուց կայցնե-
լով երկար ու ազահորեն ծուխը ներս քաշեց: Իմ
դեմը նստած պառավ վրացուհին թեքվել էր ա-
ռաջ և սպասող հայացքով դիտում էր փոխդնդա-
պետի դեմքը, իսկ ինչ վերաբերում է նրա երի-
տասարդ աղջկան, ապա այդ պահին նա ամբող-
ջությամբ մոռացել էր իբեհն: Նրա սև ու ձգողա-
կան հուժկու ուժի աչքերը սլարդապես բոցկլաում

էին հետաքրքրութեան կայծերով: Նա չհամբերե-
 լով, որպեսզի Բարիկյանը ծխի ու շարունակի իր
 խոսքը, արագ առաջ թեքվեց և հուզված շշնջաց.
 — Հեռո՞, հեռո՞, որտե՞ղ է հիմա Անահիտը:
 — Մենք ամուսնացանք, — ծխի թանձր քու-
 լաներն արագորեն սլացող ճեպընթացի լուսա-
 մուտից դուրս փչելով, շարունակեց փոխադա-
 պեար: — Շուտով ինձ նոր պաշտոնով փոխադրե-
 ցին Երևանում կանգնած մի գործատու: Այդ շատ
 ուրախացրեց թե ինձ և թե Անահիտին, որով-
 հետև նա հնարավորութեան էր ստանում իր
 երածտական կրթութեանը շարունակելու Երևանի
 Պետական Կոնսերվատորիայում: Մենք փոխա-
 դրվեցինք Երևան և առանց դժվարութեան նա
 ընդունվեց Կոնսերվատորիա: Իժրաստաքար
 նրա ուսումը երկար չտևեց: Վեց ամիս հետո ինձ
 կանչեցին Մոսկվա, իսկ այնտեղից աշխատան-
 քով փոխադրեցին Օդեսա: Մինչ այդ, ինձ արդեն
 կապիտանի աստիճան էին տվել: Պետք է խոստո-
 վանեմ, որ ստեղծված նոր դրութեանն ինձ չէր
 ուրախացնում: Սակայն ևս ոչինչ անել չէի կա-
 րող: Հրամանը պետք է կատարվեր: Ես վերա-
 դարձա Երևան և իմ Օդեսա մեկնելու լուրը

հայտնեցի Անահիտին: Միևնույն ժամանակ ես
նրան բացատրեցի Մոսկվայի ճանապարհին իմ
հղացած նախադիժը՝ մեր հետագա ապրելակեր-
պի մասին: Ես պնդում էի, որ նա մնար Երևա-
նում և շարունակեր իր ուսումը: Ես չհամա-
ձայնվեցի:

— Ես կգամ քեզ հետ, — վճռականապես հայ-
տարարեց նա, — Օղեսայունն էլ կոնսերվատորիա
կա, ես ուսումս կշարունակեմ այնտեղ:

Ոչ մի կերպ չկարողացա նրան համոզել: Ոչ
դայրույթով ու սպառնալիքով և ոչ էլ քաղցր
խոսքերով:

Աշնան վերջերին մենք արդեն Օղեսայունն
էինք: Անահիտն ընդունվեց կոնսերվատորիա,
բայց երկու ամիս հետո ստիպված էր հաճա-
խումները դադարեցնել:

Մենք երեսայի էինք սպասում:

Անահիտին, իր պարասպմունքներից չկտրե-
լու համար, ես իմ լենայած միջոցներով գնեցի
մի դաշնամուր, որը գերմանական Փիրճայի ար-
տադրութունն էր: Ճիշտ է, երկար աարիներ գըտ-
նըվում էր մի հրեա ընտանիքի ձեռքում, բայց
պահպանվել էր շատ լավ: Կար միայն մի ան-

հարմարությունս նրա կափարիչի հակառակ կողմում փակցված արծաթի մի փոքրիկ կտորի վրա փորագրված էր դաշնամուրի սիրունու աճյունը՝ «Էմմա»։ Ինչպես ինձ ասացին, այդ էմման վաղուց արդեն մահացել էր և նրանք ինձանից թույլտվություն խնդրեցին արծաթյա փորագրությունը հանել կափարիչի վրայից։ Այդ ժամանակ իմ գլխում մի միտք հղացավ և ես եռանդով ձեռնարկեցի նրա իրագործումը։ Ես Օդեսայում գտա մի հայ վարպետ, որը նույն չափի արծաթի վրա փորագրեց «Անահիտ» աճյունը և փակցրեց կափարիչի վրա բաց մնացած տեղը։

Այսպես ապրում էինք մենք Օդեսայի մեր բնակարանում։ Մենք արդեն երկու երեխա ունեինք, երկու սիրունիկ աղջիկ, որոնց չարածնի ազմուկները ամբողջ օրը մեր սենյակները դվարձության մեջ էին պահում։ Անահիտն ավարտել էր Կոնստանտնուպոլիսի և Օդեսայի Ֆիլհարմոնիայում իր առաջին համերգներն էր տալիս։ Մեր ազատ ժամերին մենք նստում էինք դաշնամուրի առաջ և Անահիտն ինձ նվագի դասեր էր տալիս։

Եստ չանցած ես ազատ կերպով կարողանում էի իմ սիրած հայկական մի քանի մեղեդիա-

Ներ նվագել, իսկ հետո ես կարողանում էի նվա-
գել նաև ամենաբարձր ուսմանս ներք: Սմենամեծ
հաճույքով ես սովորեցի նվագել Իսհան Շարաու-
սի Վիեննական աստառի հեքիաթները: Եվ երբ
մեր մտերիմները հավաքվում էին մեզ մոտ դը-
վարձանայու, վայլան անպայման ես էի նվագում:

Եվ սհա սկսվեց պատերազմը: Մեր զորա-
մասն առաջ շարժվելու հրաման ստացաք: Այդ
օրն ու գիշերը գերմանական սավառնակներն ան-
քնդհատ թռչում էին Օդեսայի վրայով և խլացու-
ցիչ պայթյուններից զղրգում էր քաղաքը: Ամ-
բողջ ժամանակ ես դրադված էի զորամասում:
Միայն վերջին պահին, երբ զորամասը պատ-
րաստ էր շարժվելու, ես մեքենայով եկա տուն,
Անահիտին հրաժեշտ տալու: Ճիշտն ասած, ես
ոչինչ չկարողացա նրան ասել: Սաստիկ հուզմուն-
քը խեղդում էր ինձ և ես կարծեմ ինչ-որ հիմար
բանի պատճառով նույնիսկ բարկացա երեխանե-
րի վրա: Ներքևում մեքենան աղղանշաններ էր
տալիս: Ինձ շտապեցնում էին: Ես լուռ գրկեցի
երեխաներին և համբուրեցի: Ես Անահիտի գլու-
խը սեղմեցի կրծքիս: Նա արտասվում էր: Չգնում
էր արդյոք, որ մենք վերջին անգամն էինք մտնում

ԵՏԻ
A 6061
1909

ՀԱՅԿ ԳՐԱԴԱՐԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ ԵՎ
ԱԿԱԳՆՄԻՐ

տեսնում: Երևի դգում էր: Ես նույնպես դգում էի:
Ես համարյա համոզված էի, որ նրանց թողնում
եմ ընդժիշտ:

Երբ ես արտասուքները կոկորդումս սեղ-
մած, աստիճաններով ներքև էի վազում, վերևում
դաշնամուրի ուրախ հնչյուններ լսեցի: Ես կանդ
առա: Անահիտը Վիեննական անտառի հեքիաթ-
ներն էր նվագում: Սակայն չգիտեմ ինչու, ճա-
կատագրական այդ պահին, վայլսի զվարթ թրթ-
թռումները իմ ականջին հնչում էին որպես սղո
տխուր մեղեդիներ...

Ես այլևս Օդեսա չվերադարձա: Մեր գորա-
մասը փոխադրվեց ռազմաճակատի կիևի համ-
վածը և այդ ուղղութ յամբ էլ մենք նահանջեցինք
մինչև Վորոնեժ: Ես կարվեցի Օդեսայից: Թե ինչ
է տեղի ունեցել այնտեղ, ինձ հայտնի չէ, կամ
ավելի ճիշտ հայտնի է այն, ի՞նչ բոլորը գիտեն:
Բախտի բերումով, թե՛ չգիտեմ ինչպես, հետա-
դաշում ես իմ գորամասով մասնակցեցի Օդեսայի
համար մզվող կոփվներին և քաղաք մտնող առա-
ջիններից մեկն էի: Ես դնացի մեր տունը: Շեն-
քը դատարակ էր, կիսավեր և այրված: Իմ ընտա-
նիքից ոչ մի հետք չկար: Ես շրջեցի ամբողջ քա-

դաքը: Ոչոք ոչինչ չասաց: Մի քանի օր հետո մի-
այն, երբ ես նորից գնացի իմ ապրած տան շուր-
ջը թափառելու, հանդիպեցի մի նիհար ու սմբած
պառաւի: Նա ճանաչեց ինձ և վզովս փաթաթվե-
լով անվերջ արտասովում էր: Հրաշք բան: Բանից
պարզվեց, որ նա իմ հարեանունին էր: Երբ պա-
տերադմն սկսվեց, նա քսանութ տարեկան էր...

— Որտեղ է Անահիտը, ի՞նչ են եղել երե-
խաները, — հարցրի ես նրան: Նա ոսկրոտ ձեռնե-
րով աչքերը սրբելով շշնջաց կամացուկ:

— Գնանք: — Նա ինձ տարավ մեր բակը, որը
ծածկված էր աղբակույտերով և ջարդված աղյու-
սի կտորներով: Բակի հեռավոր անկյուններից
մեկում նա կանգնեց և գլխով ինձ ցույց տվեց
ցածրիկ մի հողաթումբ:

— Ահա այնտեղ են նրանք, — շշնջաց նա և
հեկեկալով ընկավ հողաթմբի վրա:

Ես լուռ հանեցի գլխարկս և ծունկի իջառ
Ամբողջ իմ կյանքում — առաջին անգամ ես այլևս
չէի աշխատում զգուշ իմ հեծկլտոցներս...

Կեոն Բարիկյանի ճայնը դողաց: Նա խոսքը
կիսատ թողնելով վերցրեց մի նար ծխախոտ և
լուռ ծխեց: Նրա գեմը նստած երիտասարդ վրա-

ցունու աչքերը լցվել էին օրտասուքի կաթիլնե-
րով, իսկ նրա մայրը հազիվ էր զսպում կոկոր-
դում սեղմված հեծկլտոցը:

— Իմ հարեանուհուց ես իմացա ողբերգա-
կան այդ ամբողջ պատմութիւնը, — վառված լուց-
կին վազոնի պատուհանից դուրս նետելով — շա-
րունակեց Բարիկյանը:

— Օգեսան գրավելուց հետո մեր տունն է
եկել ուսմիհնական բանակի մի մայր: Նա Անա-
հիտին շատ է տանջել... հետո գնդակահարել է
նրան: Երեխաները լաց ու կոծ էին բարձրացրել:
Նա մոր դիակի վրա գնդակահարել էր նաև երե-
խաներին: Հետո նա մեր տան լուր իրերը հա-
վաքել, բարձել է ավտոմեքենաներին ու հեռա-
ցել: Նրա հեռանալուց հետո իմ հարեանուհին
սպանվածների դիակները տարել է բակը և թա-
ղել այն հողաթմբի տակ, որի առաջ ծուծը էի
իջել ես:

Ես հեռացա Օգեսայից: Ինձ նշանակել էին
գիվիգիայի հրամանատար և ես իմ գիվիգիայով
գնում էի դեպի Ռուսիան: Վրեժի ու բազմական
սխրագործութիւնների մասին ես ձեռ ոչինչ չեմ

պատմի: Իմ վիճակում գտնվող մարդու համար
այդ, մասին խոսելն ավելորդ է:

Բուխարեստի շրջանում մղած դաժան մար-
տերից մեկում ես ծանր վերք ստացա, որի պատ-
ճառով հետագայում կտրեցին թևս: Ես վեց ամիս
պառկեցի Բուխարեստի գինվորական հիվանդա-
նոցում, իսկ առողջանալուց հետո ինձ նշանակե-
ցին ռուսիական մայրաքաղաքի գինվորական
պարետի տեղակալ:

Այն, ինչ պատմում եմ ձեզ, պատահեց Բու-
խարեստի գրավումից երկու ամիս հետո: Ես ինձ
հետ վերցրած ավտոմատավորների մի ջոկ շրջում
էի քաղաքի փողոցներով՝ հսկելով կարգը:

Ես անցնում էի երեք հարկանի մի տան
առջևով: Տունը փողոցից բաժանված էր փոքրիկ,
բայց գեղեցիկ ձևավորված մի պարտեզով: Տան
վերևի հարկից դաշնամուրի նվագ էր լսվում:
Այդ հետաքրքրեց ինձ: Ես կանգ առա ե լարեցի
լսողութունս: Փողոցում նվագը լսվում էր պար-
զորոշ և իմ աչանջներին հասած հնչյուններից
ես մի պահ ցնցվեցի: Այնտեղ, վերևում նվագում
էին Շտրաուսի «Վիեննական անտառի հեքիաթ-
ները»: Ինձ թվաց թե ես լսում եմ իմ երջանիկ

կյանքի անմոռանալի օրերի ուրախ նվազը և իմ
ամբողջ մարմնով հաճելի մի սարսուռ անցավ:

Ինչպես պատահեց այդ: Ես հիմա դժվարա-
նում եմ ասել: Ի՞նչն ինձ առաջ մղեց: Լեռա-
քրքրությունը, ճվաղելու ցանկությունը, երա-
ժրշտության գյութիչ հնչյունները, հոռյաք,
ուրախանալու պահանջը, խորը վշտի դիտակցու-
թյունը, թե՛ կարգ պահպանելու անհրաժեշտու-
թյունը: Չգիտեմ: Չեմ կարող ասել: Կարծես թե
այդ ամենն այն ժամանակ հրացուլքի նման շո-
ղաց իմ գլխում և ես պարտեղի դուռը հրելով
ներս մտա: Պահակներին ներքևում թողնելով ես
երկու ավտոմատավորի ուղեկցությամբ բարձ-
րացա վերև: Նվազի ձայնը դալիս էր երբորդ
հարկից: Ես դտա ինձ անհրաժեշտ դուռը և թա-
կեցի: Փոքր ինչ հեռո մեկը մտնեցավ և բաց
արեց դուռը:

— Իուր էիք նվազում—հարդրի ես:

— Ոչ կինս էր,— իսկույն պատասխանեց նա
և անմիջապես արդարացավ, — դիտեք, նա դաշ-
նակահարուհի է և պատրաստվում է վաղվա հա-
մերգին: Եթե որևէ կերպ խախտել ենք կարգը,
ներեցեք մեզ, խնդրում եմ:

Նա խոսում էր կտրտված ուռևերենով, ան-
ընդհատ քծնում էր ու ինձ պատիվներ տալիս,
ստորաքարշ մարդու բուրբ հնարամտություննե-
րով: Այնպես որ, անփորձ մարդը խոսելով նրա
հետ, կարող էր մտածել, թե ինքը միանգամայն
պատվով մարդու հետ դուրժ ունի: Սակայն ես,
չգիտեմ ինչու, հենց առաջին հայացքից անբա-
ցատրելի զզվանք զգացի դեպի այդ մարդը: Երևի
այդ նրանից էր, որ նա կծկվելով ու խոնարհվե-
լով աշխատում էր իմ աչքից թաքցնել իր անա-
գիճ ֆիզիոնոմիան:

Նա ինձ տարավ բավական ընդարձակ մի
սրահ, որի խորքում դրված էր դաշնամուրը, իսկ
դաշնամուրի առաջ նստել էր միջին տարիքի, բա-
վական հետաքրքիր դեմքով մի կին: Ինձ տես-
նելուն պես կինը հարգալի ոտքի կանգնեց:

— Խնդրում եմ իմ ներկայությամբ նվազել
այն ինչ քիչ առաջ դուք նվագում էիք — կուշք
դիմելով ասացի ես: Նա ինձ չհտակացավ: Նրա
ամուսինն առաջ նետվեց թարդմանելու իմ առա-
ձը: Կինը նստեց և խփելով դաշնամուրի ստեղնե-
րին նվագեց «Վիեննական անտառի հեքիաթնե-
րը»: Ռումինուհին նվագում էր վարժ ու թեթե
թրթռումներով, բայց կարծես, թե այդ նվագը

Ինչ որ մի բանով տարբերվում էր մինչև այդ իմ
լսած նվագներից: Այդ բանը շատ հետաքրքրեց
ինձ և երբ նա վերջացրեց, ես թույլավունջուն
խնդրեցի նվագել նույն նոտաներով:

Ես նստեցի դաշնամուրի առաջ և խփեցի
ստեղներիս: Սակայն նկատելով որ կափարիչը
ծածկված է, ես նվագն ընդհատեցի և վեր կենա-
լով բարձրացրի կափարիչը... Ինչ պատահեց ինձ
հետ, անհնար է նկարագրել: Կափարիչի վրա ես
կարդացի «Անահիտ» և թուլացած ընկա աթոռի
վրա: Ես շնչահեղձ էի լինում, ես դողում էի
ամբողջ մարմնով:

Իմ առջև կանգնել էր կնոջս ու երեխանե-
րիս դահիճը...

Ճեպընթացը սուլելով մտավ Բորթոմի կայա-
բանը և կանգ առավ: Կենս Բարիկյանին մխիթա-
րելու ոչ մի խոսք չգտնելով, ես վեր կացա ծան-
րացած սրտով և ներան ու իմ վրացուհի հարևա-
նուհիներիս բարի ցանկությունների մաղթելով,
իջա կառամատույց:

Մառախլապատ ու ամպամած օր էր: Անաս-
տապատ լեռների վրա թափվում էր աշնան անձ-
րևը:

ԻՄ ՀԱՐԱԶԱՏ ԵՐԵՎԱՆԸ

Նվեր Վ. Իկտարիային

Ս մեն ինչ կատարվեց անսովոր արագութեամբ:
Առավոտ վաղ ճարտարապետ Մարտին Սար-
ինյանը ծանուցադիր ստացավ, իսկ երեկոյան
նրա ընկերները հավաքվեցին նրան ռազմաճակատ
ճանապարհելու:

Երևանում Մարտին Սարինյանը լավ ընկեր-
ներից բացի ոչ ոք չուներ: Ծնողները ապրում
էին հեռու Զանգեզուրում, կապված էին հայրե-
նի հողի հետ և ամեն անգամ, երբ խոսք էր լի-
նում քաղաք փոխադրվելու մասին, վիճում էին,
ադմկում, դայրանում և հարցի լուծումը հետա-
ձգում հաջորդ տարվան: Իսկ նրանց որդին Մար-
տին Սարինյանը, արդեն ճարտարապետ էր,
ուներ ծանոթների ու ընկերների լայն շրջան,
քաղաքի կենտրոնում երկու սենյակից բաղկա-

ցած նոր բնակարան էր ստացել, գեղեցիկ էր,
վայելչակազմ ու խոհուն, ուժեղ էր ու թարմ և
ապագայի վրա նայում էր անսասան հույսերով:
Սիրում էր Նրեանը, սիրում էր նրա կապույտ
երեկոները, նրա ոսկե աշունը, նրա ծառերը
խշտուն և կարկաչուն ջրերը... Սիրում էր աշնա-
նային երազկոտ երեկոներին ընկերների հետ
բարձա՛ալ Նորջի այգիները և կլանճեաթի թախ-
ժալի հնչունների տակ երազել սպիտակազգեստ
աղջիկների մասին, սիրում էր կյանքը:

Բայց ահա նա գնում էր:

Գնացել էին նրա ընկերներից շատերը, գնում
էր և նա: Ընկերները նրան ճանապարհեցին ա-
ռանց ազմուկի... Նրանք գինով լի սեղաններ
բաց չարին, կենացներ չխմեցին ու ձառեր չա-
սացին: Նրանք նստեցին նրա հետ, նրա սե՛յա-
կի կիսաթավարում, խոսեցին պատերազմի հետ
կապ չունեցող հարցերի մասին, փորձեցին ան-
տարբեր ձևանալ, ուրախ կատակներ անել... Երբ
հասավ ժամը նրանք ոտքի կանգնեցին: Այն
ժամանակ Սարինյանի պառավ հարևանուհի
Մաքրուհի տատը անաղմուկ բարձրացավ տեղից,
թիստ ու հանդիսավոր լուսթյան մեջ մտնեցավ

երիտասարդին և իր դողդոջուն շրթունքներով
համբուրելով ճակատը սասաց.

— Գնա ըստով որդի, ուժ ու զորություն
և՛ ցանկանում քեզ, հաղթանակով տուն դառ-
նաս ու այս սենյակներում ուրախությունով ըր
հարսանիքը կատարենք:

Մարինյանը արագ հրաժեշտ տվեց նրան ու
բուր նրանց, ովքեր կայարան չպետք է գնային,
ճանապարհորդական պարկը կապեց մեջքին, տ-
ռանց որևէ պատճառի անցավ մի սենյակը, դար-
ձավ մյուսը, մի սլահ կանգնեց անորոշության
մեջ և դուրս եկավ: Միջանցքում իր բնակարանի
բանալին նա հանձնեց պառավ հարևանունուն:

— Պահպանիր բնակարանս, տատի, վերա-
դարձա, էլի կապրեմ այստեղ, չվերադարձա... Նա
ձեռքը թափահարեց և արագ քայլերով աստի-
ճաններից ներքև իջավ:

Աշնանային խաղաղ երեկո էր: Քամու ընթ-
շորեն թափահարվող թևերը նորքի այգիներից
քաղաքի վրա էին սփռում հասուն մրգերի դու-
րալի բուրմունքը:

Հույսերը հանգցրած մի տրամվայ տագնա-
պալի գանգահարություններով թռավ անցավ

Արույան փողոցը: Մի ավտոմեքենա դիմացի
հինգ հարկանի շենքի առաջ կանգնած ընդհա-
տուճներով ազդանշան էր տալիս:

Քողարկված լույսերով Երևանը պարուրված
էր մշուշապատ խավարով:

Չնայած դրան, օդի մեջ լսվում էր նրա
հզոր շնչառությունը, որը վկայում էր մեծ կյան-
քով ապրող քաղաքի գոյության մասին:

Մարտին Սարինյանը փողոցում կանգնելով
ականջ դրեց քաղաքի իրիկնային խուլ աղմուկ-
ներին: Մանով ու հարազատ էին այդ աղմուկ-
ները: Նա մի պահ փակեց աչքերը, ասես ավելի
լավ ապահովելու համար և նրա մտքին հոսող
ժապավենի վրա պարզորոշ գծադրվեց հարազատ
Երևանը իր կանաչտխիտ պուրակներով ու հո-
յակապ շենքերով, իր լայն ու ազատ պողոտա-
ներով, որոնք ձգվում են ծայրամասից ծայրա-
մաս, դեղձիների բուրուճնալեռ այգիներով ու
բարդիների խշշուն ծառաստաններով: Գործա-
րաններից բարձրացող խուլ շոինդը տարտամ
մի օրինակությամբ տարածվում էր հեռավոր
թաղամասերի վրա:

— Աւշանում ենք Մարտին, — թեթևակի
կպչելով նրա թևին ասաց ընկերը:

— Այո, այո, գնանք, — մտքերից սթափվե-
լով մրմնջաց Մարինյանը և մեջքին կապած ճա-
նապարհորդական պարկն ուղղելով լայն քայլե-
րով առաջ գնաց: Առժամանակ նրանք քայլում
էին լուռ, ամեն մեկն իր մտքերի հետևից ըն-
կած: Դեմը, աստղազարդ երկնքի կապույտ ֆոնի
վրա գծագրվում էր օպերային թատրոնի վեհա-
շուք կերպարանը: Թվում էր, թե խավարում
կանգնած քարակոփ այդ մոնումենտը իր լուրջ
ու հանդիսավոր հայացքով իշխում էր դեպի հե-
ռուսները ձգված քաղաքի վրա և պահպանում
նրա խաղաղությունը:

Ծառուղու վրա սպիտակ ակացիաների տակ
դրված էր կանաչ մի նստարան: Մարտին Մա-
րինյանը մտադրադ նստեց այդ նստարանին և
իր մտածկոտ հայացքը հանեց օպերային թատ-
րոնի շենքին: Մի մարդ մոտեցավ գլխավոր
մուտքին և կողնյա ծանր զուռը ճոճոցով լաց-
վեց: Մի ակնթարթում էլեկտրական լույսի հրա-
շեկ խուրճը նեղ շերտով փայլատակեց հրապա-
րակի վրա և իսկույն հալվեց խավարի մեջ:

Մարտին Սարինյանը հիշեց, որ այդ օրը օպերային թատրոնում «Ալմաստ»-ի անուշ մեղեդիներն են երգում, հիշեց ու ինքնաբերաբար շոշափեց գրպանները: Երկու օր առաջ նա տոմս էր գնել: Տոմսի փոքրիկ թերթիկը մատների մեջ ձմրանելով նա գցեց նստարանի տակ և վեր կացավ:

— Կան բաներ, որ սիրում ես, բայց չգիտես թե ինչու, — հասնելով Աբովյան փողոցի անկյունը լսությունը խզեց Մարինյանը, — ա՛յ, ասե՛նք թե Երևանը: Ինչու եմ սիրում, չգիտեմ, բայց շատ եմ սիրում: Եթե հազար կյանք ունենամ հազարն էլ կտամ Երևանի համար:

— Գիտես ինչու ես սիրում, — հարցրեց ընկերը:

Ինչու:

— Երևանի ջրին սովոր ես:

— Ձե, այդ չէ, — խսկույն ընդհատեց Սարինյանը:

— Ես ասեմ ինչու, — ձայնեց մյուս ընկերը:

— Ա՛ս:

— Որովհետև Երևանի շատ շենքեր քո նախազծով են կառուցվել:

— Բո ասածի մեջ ճշմարտությունն կա, բայց
մեթե իմ սերը այդքան նեղ կարող է լինել:

— Ես գիտեմ ինչու, — խոսակցությանը
խառնվեց երրորդ ընկերը.

— Ինչո՞ւ:

— Որովհետև ուրիշ ոչ մի քաղաքում դու
Երևանի աղջիկների նման աղջիկներ չես գտնի:
Բոլորը ծիծաղեցին բարձր ու սրտաբուխ: Երի-
տասարդ տղաների ծիծաղի այդ պոռթկումից
անցորդները տարակուսանքով մի կողմ քաշ-
վեցին:

— Չէ, չէ, անկեղծորեն եմ ասում, այդ չէ:

— Այն դեպքում դուցե ի՞նքդ կասես, Մար-
տին:

— Միթե՞ ես չասացի, որ չգիտեմ, թե ինչու:

— Մի խոսքով անբացատրելի է, — եզրա-
փակեց ընկերներից մեկը: Նրանք արագ անցան
Լենինի հրապարակով: Մարտին Մարտինյանի աչ-
քից չվրիպեց. որ դիմացի տան առաջին հարկի
մի լուսամտուտից լույս էր թափանցել փողոցի
վրա:

— Հարկավոր է զգուշացնել հերթապահ մի-
լիցիոներին, — մտածեց նա և բաժանվելով ըն-
կերներից մտեցավ միլիցիոներին:

— Սիրելիս, տեսնում ես այն լույսը, հարկավոր է զգուշացնել: Եվ անսպասելիութունից դարձաքա՞ծ միլիցիոներին երկմտանքի մեջ թողնելով վազեց հասնելու ընկերներին:

Շահումյանի հուշարձանի մոտ նա ջուր խմեց: Փոքրիկ մի տղա քարեր էր շարտում ավազանի մեջ: Կամացուկ մոտենալով Սարինյանը ամուր բռնեց երեխայի թևը:

— Ինչու ես անկարգութուն անում: Երեխան միանգամից չհասկացավ, թե իրենից ինչ են ուզում:

— Ձրի մեջ քար գցելը անկարգութուն է: Երեխայի նայիվ հարցը Սարինյանի ժպտը շարժեց:

— Փոքրիկ այս ավազանը և այս ջուրը դեղեցկության համար է, իսկ դու քարեր ես շարտում: Երեխան դարձյալ չհասկացավ, թե իրենից ինչ են պահանջում:

— Քարը ջրին թնչ կարող է անել, ջարդելու ոչինչ չկա:

— Ավազանն ես կեղտոտում, հիմար, դե շուտ հեռացիր: Սարինյանի դայրացած տոնը երեխային վախեցրեց, նա թևը պոկելով թռչու-

նի թեթևությամբ անհայտացալ պուրանի թփե-
րի մեջ: Ավազանի ջրերը ծփում էին մեղմ ու
հանդարտ շուկով: Երկ՝ քի համ ու կենտ աստ-
ղերը երազկոտ հազանքով լողում էին ջրերի
վճիտ սառնության մեջ: Մարտին Սարինյանը
ավազանի ափին կանգնեց մի պահ և հեռացալ
զնաց:

Միկոյանի պողոտայում անց ու դարձ ա-
նողները քիչ էին: Ընկերներից մեկը ուրախ մի
երգ սկսեց, մյուսները ձայնակցեցին: Փողոցով
անցնող մի աղջիկ տհաճությամբ երեսը շրջեց
և ասաց այնքան բարձր, որպեսզի երգողները
լսեին:

— Թիկունքում լիզունները բացվել է... Սա-
րինյան լսեց և կանգ առալ: Ընկերները երգը
դադարեցրին: Աղջիկը, որ մի քանի քայլ հեռա-
ցել էր, անսպասելի լռությունից զարմացած ետ
հայեց: Նա ահով լսեց, որ երիտասարդներից
մեկը իրեն է կանչում:

— Ընկերուհի, աղջիկը, փորձեց հեռանալ
մտածելով, որ հարբածների հետ գործ ունի:

— Ընկերուհի մի ըստե խնդրում եմ: Աղ-
ջիկը կանգ առալ, նրան մոտեցալ Մարտին
Սարինյանը, իսկ հետո նաև նրա ընկերները:

— Ի ուր ինձ և իմ ընկերներին վիրավորեցիք: Չէք բարիհաճի առել, թե ինչ պատճառով:

— Ձեր հասակի երիտասարդները փողոցներում չեն երգում:

— Ես ուղմանակաա եմ գնում:

— Պահ, հետո ինչ, գնացեք: Մեր հարազատները վաղուց են գնացել, իսկ մենք աղմուկ չենք բարձրացնում... Մինչ Սարինյանը կպատրաստվեր նրան պատասխանելու, ազնիվը կտրուկ շարժումով շուռ եկավ և արագորեն հեռացավ:

— Վրդովված էք, — քրթմնչուց Սարինյանը, — ժողովուրդն այս օրերին միայն լրջության է սովոր:

Կայարանի հրապարակից նա մի անգամ էլ նայեց Երևանին: Մալարում տարածված քաղաքը շնչում էր ամբողջ կրճքով: Լուռ հայացքով նա հրաժեշտ տվեց Երևանին:

2.

Այդ աշնանը երկիրը ծանր օրեր ապրեց:

Բարոյ. — Գերբեմեզ կրկաթուղազծի կայարաններից մեկում Մարտին Սարինյանը լսեց կրասնոգարի անկման լուրը: Գերմանացիները սո-

դաւմ էին դեպի Կովկասյան լեռնաշղթան: Դոնի
ու Հյուսիսային Կովկասի քաղաքներից էվա-
կուցիայի ենթարկված աղգաբնակչությունը
պատասպարան էր ստանում Անդրկովկասի քա-
ղաքներում ու գյուղերում:

Եվ ահա մինչ Մարտին Սարինյանը ռազ-
մաճակատ էր սլանում, նրա հայրենի Երևանում
անսպասելի դեպքեր տեղի ունեցան:

Սարինյանի բնակարանում ժամանակավո-
րապես ապրելու եկավ պրոֆեսոր Երվանդ Լու-
սինյանի ընտանիքը: Երվանդ Լուսինյանը Կրաս-
նոդարի բժշկական ինստիտուտի պրոֆեսորն էր:
Ինստիտուտը փոխադրվել էր Երևան, իսկ նրա
հետ էլ բոլոր նրանք, ովքեր աշխատում էին
այդ հաստատութայնում:

Այդ օրերին կառավարական օրգանները քա-
ղաքի բնակիչներից խնդրում էին «խտանալ»,
հրաժարվել խաղաղ կյանքով ապրելու որոշ հար-
մարություններից: Եվ Երևանը մտերմորեն
պատասպարում էր աղետի ենթարկված իր հեռա-
վոր եղբայրներին, մայրերին ու քույրերին:

Սարինյանի սենյակները միանգամից դուր
եկան, թե պրոֆեսորին և թե նրա կնոջն ու
աղջկան:

Մենք ոչ մի բանի ձեռք չենք տա, ոչինչ չենք փչացնի, — անընդհատ կրկնում էր պրոֆեսորի կինը, արկին Հայկունին, իր վրա զգալով Սարինյանի պատավ հարևանունի, Մաքրունի տատի անեղ հայացքը:

— Եվ ինչու Դուք համաձայնվեցիք, — դժգոհ կշտամբում էր Մաքրունի տատը, — Լաված բան է, որ լիքը սենյակները ապրելու համար մի ուրիշին հանձնեն: Իսկ դուք գիտե՞ք, թե ո՞վ է այս սենյակների տերը: Նա Մարտին Սարինյանն է, այս բոլոր շենքերը նա ինքն է շինել:

— Տառի, ես հավատացած եմ, որ ձեր այդ երիտասարդ բարեկամը, եթե այստեղ լինելու, նա ինքը մեզ իր մոտ կհրավիրեր, — քնդհատեց Լուսինյանի աղջիկը:

— Եվ ինչո՞ւ պիտի հրավիրել: Առանց ձեզ էլ, նա իրեն վատ չէր դուռն: Նրա համար աղափնյակս, բոլոր աղջիկները պատրաստ էին միմյանց մտերբը պահո՞ւել...

— Նշանակում է հետաքրքիր երիտասարդ է եղել ձեր բարեկամը, եզրափակեց պրոֆեսորը:

— Երևանում, բոլորը մատով էին ցույց տալիս: Ետները նրա հետ ծանոթանալու համար

դալիս էին ինձ մտա: Իսկ նա ամենքի հետ էլ ծա-
նոթանում էր, կատակներ էր անում և ամեն-
քին էլ մոռանում էր...

Մի քանի օրվա ընթացքում Մաքրուհի տա-
տը նորեկներին նկարագրեց Մարտին Սարին-
յանի ամբողջ կյանքը: Այնպես, որ նրանք թեև
երիտասարդին ամենևին չէին տեսել, բայց նրա
մասին արդեն պարզ պատկերացում ունեին:

Սարինյանի իրերը մեծ սենյակից փոխա-
դրել էին ներսի փոքր սենյակը և խնամքով դա-
սավորել: Լուսինյանների դրագեցրած սենյակում
թողել էին միայն տուալետի սեղանը, որի վերևի
պատը սրտածեղ զարդարված էր երիտասարդի
տարբեր ժամանակի ու տարբեր տեսակի լուսա-
նկարներով:

— Այս տուալետը և այս նկարները նույ-
նությամբ կթողնենք, — հայտարարեց Արփիկը,
պրոֆեսորի աղջիկը, միևնույն ժամանակ հոր
ուշադրութունը հրավերելով երիտասարդի խիստ
զրավիչ դիմագծերի վրա:

— Տեսեք հայրիկ, նկարներում նա հիանա-
լի է: Հետաքրքիր է ինչպիսին է կյանքում:

— Դրանք հաճախ խափոսիկ են լինում, —

Սարինյանի նկարները ուշագիշտ գիտելուց հետո
անփութորեն նկատեց պրոֆեսորը, — այ, երբ
երիտասարդը վերադառնա, այն ժամանակ կտես-
նենք... Մերունին Մարտին Սարինյանի մասին
խոսում էր այնպիսի մտերմական եղանակով,
որ թվում էր, թե խոսքը իր վաղեմի բարեկա-
մին է վերաբերվում:

Տիկին Հայկունին խոհանոցում նախաճաշ էր
պատրաստում: Արփիկը աթոռները մոտեցրեց և
հայր ու աղջիկ նստեցին լուսամուտի առաջ:
Իրսում մառախլապատ անհրապույր եղանակ էր:
Քանաքեռի բարձունքներից փչող քամին փո-
ղոցներում փռու ամպեր էր բարձրացնում: Ին-
մացի պուրակի տերևաթափ ծառերը քամու
խիսա թափահարումից հասաշում էին տխուր ու
միալար, հանաչ մի եղևնի արմատահան արված
հենվել էր դալար բարդենուն և այժմ էլ այդ-
պես էր մարաում հողի դեմ: Կտրված մի եր-
կաթալար տարտամ շվոցով դարնվում էր դեզ-
նասերև ուռենուն: Գուրակը ամայի էր: Նրա
իրա բացվող դպրոցի դուռը մերթընդմերթ բաց-
վում էր և ներս թողնում երիտաների փոքրիկ
խմբերին: Հայր ու աղջիկ լուռ դիտում էին լուռ

սամուտից բացվող տեսարանը: Լարված դիտու-
մից պրոֆեսորի աչքերը հողնեցին: Նա կտ ըն-
կավ աթոռին և սպիտակ թաշկինակը հանե ու
սրբեց ակնոցերը:

— Զարմանալի կերպով ձմեռը ուշանում
է. — խոսեց պրոֆեսորը, — դեկտեմբերին այսպիսի
եղանակ տեսնվում բան է: Իսկ Կրասնոդարում
երևի հիմա կատրյալ փոթորիկ է:

— Այո, իսկական մրրիկ, — մտազբաղ ար-
ձագանքեց Արփիկը: Զմռան մոլուցքը մի կող-
մից, դերմանացիներինը՝ մյուս, մեկը մյուսին
լրացնում են: Նա լռեց մի պահ ուշադիր հա-
յացքով հետևելով փողոցից անցնող մի կնոջ, որը
ընկավ փողեխառն ջամու հոսանքի մեջ, երկու
ձեռքով աչքերը բռնած կանգնեց և հանկարծա-
կի թեթև թախչքով անցավ դիմացի պատի կտևը:

— Հայրիկ, մենք նորից գնալու ենք, — հան-
կարծ հարցրեց նա:

— Ո՛ւր:

— Հասկանալի է, Կրասնոդար:

— Իսկ դուք ինչպե՞ս եք ուզում:

— Չգիտեմ: Ճիշտն ասած Երևանը ինձ
գուր է գալիս: Նա սիրեցի այս քաղաքը, թեև

պետք է ասեմ, որ նա առանձին մաքրութեամբ
չի փայլում: Բայց այդ ոչինչ, ժամանակավոր
երևույթ է: Ինչպես երևում է քաղսովձախի նա-
խագահին քիչ են թափահարում: Կարևորը ժո-
ղովուրդն է, իսկ ժողովուրդը ինձ դուր է գալիս:

— Արեմն մե՞նք ենք:

— Տեսնենք հայրիկ: Շատ պելու պետք չու-
նենք: Ինք դիմավորական հիվանդանոցում գըլ-
խավոր բժիշկ էք նշանակվել, ես ինժեներ եմ,
մի քանի տեղից ինձ արգեն հրավիրել են...
Աղջկա անորոշ հայտարար լուսամուտից սահելով
հասավ պատին, սավերի նման տարածվեց նրա
երկարութեամբ և կոնդ առավ Յարինյանի լու-
սանկարներից մեկի վրա:

— Մի խոսքով կսպասենք, շատ պով ի՞նչ
խոսքն ավարտեց նա և ոտ ի կալ:

— Բայց հրասնողորմում ես շահեր ունեմ,—
առարկեց հայրը, թեև ինքն էլ պարզորոշ չգի-
տեր, թե որոնք են այդ շահերը: Նա մի պահ
չոնց և ավելացրեց,— իսկ Երևանը, ճիշտն ասած
ինձ էլ դուր է եկել:

— Այ տեսնում եք, հոր խոսքն անմիջա-
պես բռնեց աղջիկը, կապրենք կտեսնենք ինչ
կրեքի մեզ Երևանի դարունը...

— Մըփիկ, -- խոհանոցից լսվեց տիկինն Հայկուհու ձայնը:

— Գալիս եմ մամա: Մըփիկը ձեռքի սովոր շարժումով ետ դցեց ճակատին թափված սև մազերի փուռը և աթոռը մի կողմ տանելով հորը մենակ թողեց:

3.

Չմեռը անցավ, եկավ դարունը: Երևանի այգիներում ծաղկեցին գեղձենիները: Գարնանային տաք քամին փողոցների ու տների կտուրների վրա էր սփռում ծիրանի և յասամանի ծաղիկների սպիտակ, վարդագույն ու կապույտ թերթիկները: Բաղաքը պայտածն շրջապատող բարձունքներում փարթամորեն աճող երիտասարդ եղենիներից խաժահոտ էր բուրում:

Գարնան հետ նոր ուրախություններ եկան: Գերմանացիները Հոլզայից շարավել էին Ուկրաինական անձայրածիր տափաստանները: Ամենօր նոր քաղաքներ էին աղառագրվում: Սովետական զորքերն արդեն մաքրել էին Կրասնոդարը:

Պրոֆեսոր Լուսինյանի ընտանիքում բուռն վեճեր էին տեղի ունենում:

— Ես այստեղ չեմ մնա: Ի՞նչ գործ ունեմ
ես Երևանում: Կրասնոդարը ինձ համար հարա-
դատ է: Ես այնտեղ մեծացել եմ, տարիների շա-
րունակ աշխատել, ծանոթների ու բարեկամների
լայն շրջան եմ ստեղծել... Վերջապես ես Կրաս-
նոդարում շահեր ունեմ, — անդադար կրկնում է
պրոֆեսորը:

— Իարձյալ այդ չնչին շահերը, — դա իրա-
նում եր Արփիկը, — իսկ Երևանում ով է ոտնա-
հարում Ձեր շահերը:

— Միթե ես այդպիսի բան ասացի: Ես
պարզապես ուզում եմ իմ հարստատ քաղաքը
վերադառնալ:

— Իսկ ես չեմ ուզում, իմ հարստատ քա-
ղաքը Երևանն է:

— Այն դեպքում ես մենակ կդնամ...

Սովորաբար այստեղ վեճերը դադարում էին:
Երվանդ Լուսինյանը դժգոհ քրթմնչոցով բարձ-
րանում էր տեղից, դանդաղաքայլ մտածնում
դրքերի պահարանին և պատահած գիրքը ձեռքը
վերցնելով մեքենայաբար ու մատների շղային
շարժումներով թերթիկները շուռ տալիս:

Տիկին Հայկունին թեև վեճերին չէր մաս-

նակցում, բայց սրտի խորքում համամիտ էր
աղջկա հետ: Երբ Արփիկի հետ մենակ էր լինում
քնքշանք արտահայտող իր հայացքը աղջկաս
նից շկտրելով հորդորում էր նրան չհուզվել ու
չափից ավել չտաքանալ:

— Դու շատ խիստ ես վարվում հորդ հետ,
որդի: Այդպես չի կարելի: Նա հասակն առած
մարդ է, նրա համար դժվար է միանգամից մո-
ռանալ հարազատ քաղաքը, որտեղ մի ամբողջ
կյանք է անցկացրել: Հարկավոր է համոզել, բա-
ցատրել:

— Իսկ ինչով է Երեւանը վատ կրասնողա-
րից, — իր հարցի մեջ համատոււմ էր արփիկը, —
Նրան այստեղ չե՞ն հարդում, հարգում են, կու-
րիքները չե՞ն հողում, հողում են, էլ ինչ է
ուղում, որ անեն նրա համար:

— Գուցե և այստեղ լավ է, գուցե և վատ,
բայց մի մոռանա, որ նա չի կարող իր շահերը
զոհել:

— Ես էլ իմ շահերը չեմ զոհի:

— Ինչի հետ են կապված քո շահերը:

— Երեւանի:

— Հաղիվ մի տարի է ինչ այս քաղաքումն
ես ապրում...

— Այդ ոչինչ չի նշանակում, Երևանը ի՞նչ
համար հարազատ է:

Իսկ հարազատ Երևանն ապրում էր իր սո-
վորական կյանքով: Միայն այդ կյանքը ավելի
խիստ էր դարձել Մարդիկ իրադարձություն-
ների վրա նայում էին ավելի լուրջ, չքացել էր
խաղաղ կյանքի անփութությունը:

Թվում էր, թե ժողովրդի համար հասունու-
թյան մի նոր շրջան էր սկսվել: Այդ երևում էր
հենց ժողովրդի կասաբաժ գործերից:

Մի օր պրոֆեսոր Լուսինյանը աշխատանքից
ուշ տուն վերադարձավ: Անձրև էր գալիս: Ամուս-
նուն երկար սպասելուց հոգնած, տիկին Հայկա-
հին քաց էր արել լուսամուտի փեղկը և նստել
դով հոսանքի դեմ,

Հեռվում, պատռելով երկնքի կիսախավաքը
շանթն էր փայլաս տեղում և ակնթարթային հար-
վածով կարում անցնում էր հորիզոնից հորիզոն:
Երկար ժամանակ քաղաքի երկնակամարը ցքնց-
վում էր ամպրոպի խուլ որոտից:

Պուրակի ծառերը քամու հոսանքից օրոր-
վում էին տարտամորեն: Անձրևացողով թրջված
դալար մի ուսինի տխուր հեծում էր պուրակով

անցնող կարկաշտուն առվակի վրա: Չալպատուրիկ
մի կաշաղակ եկավ նստեց դիմացի հեռագրասյան
ծայրին, մի քանի անգամ շարժեց պոչն ու թռավ
լեռնալանջի այգիների կողմը:

Աստիճանների վրա քայլերի ձայն լսվեց:
Տիկինն Հայկուհին լուսամուտից ետ քաշվեց և
դռների մեջ տեսավ ամուսնուն: Երվանդ Լու-
սինյանը միանգամից անձանաչելի եր դարձել:
Մշտապես մաքրությամբ փայլող նրա համա-
զգեսաք թրջվել ու ցեխատվել էր, գլխարկից ու
դգեսաններից անձրևաջուրը հոսեց, լճացավ հա-
տակին: Ինձքը հողնած էր, իսկ աչքերը հողնա-
ծության հետ միասին կարծես ծիծաղում էին:

— Որտե՞ղ մնացիր այ, մարդ, այս ի՞նչ է քո
վիճակը. — անհանգստացավ տիկինն Հայկուհին:

— Ոչինչ, ոչինչ, մի փոքր դորձ ունեի, —
անփութորեն ասաց պրոֆեսորը, — աշխատում էի
Ջրանցիի վրա:

— Ջրանցքի՞, ինչ Ջրանցք, — ծայրահեղ զար-
մանքով հարցրեց կինը:

— Նորքի Ջրանցքի:

— Մի՞թե դու էլ...

— Ես, ապա էլ ով... Չգիտեմ ինչու պրո-

Ֆեստրին դուր էր գալիս, երբ կինը անհանգըս-
տանում էր իր վիճակով: Ուստի նա խտացնում
էր գույները, դրուժյունն ազելի մոայլ նկարա-
գրում, ուզում էր ինչ որ մեկի դեմ պրզուել
նրա գայրույթը, իսկ իրականում նա այնքան
էլ գոգոհ չէր կատարվածից: Կարելի էր ասել,
որ այդ պահին նա իր սեփական աչքում բարձ-
րացել էր, գոհ այն գիտակցությամբ, որ ամեն-
քի հետ ինքն էլ իբր ուժերը նվիրեց երկրի հա-
մար օգտակար մի գործի:

— Իսկ Ֆիզիկական աշխատանք կատարե-
ցիր, — շփոթված դես ու դեն էր ընկնում տիկին
Հայկունին, ամուսնու համար նոր գուլպաներ ու
զգեստներ բերելով:

— Կատարեցի, իհարկէ, զարմանալու ինչ կա:

— Իսկ այդ ինչպես քեզ տարան:

— Տարան էլի, եկան, ցուցակագրեցին ու
տարան... Նա իհարկէ շատաց, որ գործը վեր-
ջացել է առանց ցուցակագրության, որ նրան
ընդհակառակ՝ չեն ուզեցել տանել, որ ինքը դրա
համար վրդովվել է, գայրացել, նույնիսկ թիստ
խոսքեր ասել հիմնարկի դեկավարին: Նա կնոջը
չհայտնեց, որ իրեն ցանկացել են ավտոմեքե-

հայով տուն բերել, բայց ինքը հրաժարվել է:
Այս բոլորը նա չասաց:

Բայց շուտով նրա գաղտնիքը բացվեց:

Բամբուկ նման թիթե, վաղորդյան ցողի նման
զով ու մաքուր, առվակի կարկառը հիշեցնող
վճիտ ծիծաղով տուն ընկավ Արփիկը:

— Հայրիկ, բա՞վո հայրիկ, — դեռ դռնից կան-
չեց նա և ցեխոտված կոշիկները մի կողմ նե-
տելով, ուշադրություն չդարձնելով տարակու-
սանքի մեջ ընկած մոր վրա՝ թռավ դեպի հայրն
ու գրկեց նրան:

— Ես Ձեզ պետք է համբուրեմ, դուք մեծ
մարդ էք, Ինք հրաշալի սիրտ ունեք, դուք
Երևանի ամենապատվազուր քաղաքացիներից
մեկն էք, ես հպարտանում եմ Ձեզանով...

Պրոֆեսորը անհարմարության մեջ ընկածի
նման շփոթվել էր, իսկ Արփիկը նրա վզով փար-
ված անընդհատ ցնցում էր նրան ու համբու-
րում:

— Ինք մեծ քաղաքացի էք...

— Կով, լավ, բավական է, եթե այդպես
շարունակեք շուտով ինձ կոլոմբոսից մեծ կհրո-
շակեք:

— Մամա, սիրելիս, նա նշանավոր մարդ է,
այսօր նրա անունը բոլորն արտասանում էին
սիրով ու հպարտությամբ, նա բարձրացավ...

— Ո՞ւր բարձրացավ, այ որդի, — սարսափով
նրա խոսքն ընդհատեց մայրը:

— Նա բարձրացավ մարդկանց աչքում, սի-
րելի մամա...

— Է, այ որդի, կարդին ասա, բան հասկա-
նամ: Նա ասում է եկել, ցուցակագրել տարել
են, դու ասում ես բարձրացավ, ոչինչ չեմ հաս-
կանում...

— Սիրելի մամա, այսօր Նորջի ջրանցքի
բոլոր աշխատամասերում մենք միայն մի անուն
էինք լսում: Պրոֆեսոր Լուսինյան: Պրոֆեսոր
Լուսինյանը միայն ինքը ջրանցքի հունից դուրս
թափեց պայթեցված ամբողջ քարն ու հողը,
պրոֆեսոր Լուսինյանը...

— Բավական է Արփիկ, — խստությամբ աղ-
ջրկան ընդհատեց պրոֆեսորը, — իմ կարծիքով
Դուք չափից ավելի էք խանդավառվել: Ես ար-
տակարգ ոչինչ չեմ արել: Եթե Դուք ինչպիսի
ուսանք, որ մեր երկրի համար այս ծանր օրե-
րին նրեանի ամբողջ ժողովուրդը, այնպե՛ս

հայնիվ դուրս է եկել ջրանցք կառուցելու,
կաեսնեք, որ իմ արածը չնչին բան է... Հայ-
կուհի ճաշը ի՞նչ կղավ:

4.

Արժիկը ամբողջ օրերով զբաղված էր լինում:
Թեև նրան ջրանցքից արդեն փոխադրել էին
քաղաքային սօփետ, որտեղ աշխատում էր շի-
նարար ինժեների պաշտոնով, բայց և այժմե-
տանը լինում էր հաղիվ մի քանի ժամ: Տանը
կղած ժամանակ նա երբեմն կորցնում էր շրջա-
պատի նկատմամբ ունեցած իր հետաքրքրու-
թյունն ու անորոշ մի տրամուխյուն էր ապ-
րում: Ինչն էր նրա տրամուխյան պատճառը նա
ինքն էլ չգիտեր, միայն նրան թվում էր, որ
իր հետ ինչօր մի նոր բան է կատարվելու, որ
իր կյանքը մի տեսակ փոխելու է իր ընթացքը:
Ի՞նչ զգացում էր այդ, նա դժվարածում էր հաս-
կանալ: Նա միայն զգում էր և օգտանում: Տանը
կղած ժամանակ նա առանձին սիրով նստում
էր տուալետի փոքրիկ սեղանի առաջ և ուղադիր
հայացքով դիտում Մարտին Սարիճյանի պա-
տին փակցրած լուսանկարները: Արդեն երկու

տարի էր ինչ նա ապրում էր այդ սենյակում,
հետևապես երիտասարդի նկարները միշտ աչքի
առաջ ունեւր, բայց միշտ էլ զարմանալի կերօ
պով նա այդ նկարներում իր համար մի նոր
բան էր գտնում: Լուսանկարները պատի վրա
դասավորված էին ճիշտ այնպես, ինչպես նրանք
եղել էին Սարինյանի ժամանակ: Միայն մեկ
անգամ, երբ տիկին Հայկունին զգուշութեամբ
սրբում էր նկարների փոշին, նրանցից մեկը
պոկվեց ու ընկավ հատակին: Արփիկը իսկույն
վերցրեց նկարը, հանգիմանական հայացք զցեց
մոր վրա և փոքրիկ լուսանկարը նորից իր տե-
ղում ամրացնելով մորը խնդրեց նկարների փո-
շու մաքրելը իրեն հանձնարարել: Ու այնուհե-
տև ամեն առավոտ նախքան աշխատանքի գնա-
լը նա խնամքով մաքրում էր նկարների փո-
շին: Զգիտես ինչու, Սարտին Սարինյանը Ար-
փիկին արտակարգ անձնավորութուն էր թվում:
Նա գտնում էր, որ այդ երիտասարդը, ինչպես
ցույց էին տալիս նրա լուսանկարները, լայն
կյանքով ապրող մարդ է եղել: Այդ կյանքի մի
մասը, և պետք է ասել նշանակալի մասը, նա
տեսնում էր առաջնորդի վերևում, պատի վրա:

Ահա Սարինյանը հակված սեղանին, ձեռքերը դրել է ճարտարապետական գծագրերի վրա, իսկ աչքերի մտախոհ նայվածքը հասել սենյակի անորոշության մեջ: Կիսակառույց շենք: Սարինյանը կանգնել է պատի վրա, ոտքը դրել երկրորդ հարկի նախշաքար կամարին: Լուսավոր դահլիճ: Աղջիկների ու տղաների խմբի մեջ դաշնամուրի առաջ նստել է Մարտին Սարինյանը: Նա պոզա չի բնդունել, լուսանկարիչը երիտասարդին նկարել է ճիշտ այն ժամանակ, երբ նա գլուխը ետ թեքելով հաճոյախոսել է իրեն շատ մոտ կանգնած վայելչակազմ աղջկա հետ: Լինում էին քոպեններ, երբ Արփիկը մտովի իրեն համեմատում էր այդ աղջկա հետ, համեմատում ու բավականությամբ ժպտում էր: Բոլորովին չժխտելով այդ աղջկա վայելչագեղութունը, նա իրեն նրանից բարձր էր համարում: Ինչո՞ւ համար էր այս համեմատությունը, նա չգիտեր, բայց միշտ այդ նկարը դիտելիս նա համառ կերպով պնդում էր, որ ինքը այդ աղջկանից լավն էր... Արփիկն առանձին հաճույք էր զգում թենիսի դաշտը դիտելիս: Այստեղ Մարտին Սարինյանը երևում էր իր այբողջ հմայքով: Հատկապես

Թե՛նիսի համար կտրված նրա կրեմագույն անդ-
րավարտիկն ու բաց սալատագույն վերնաշա-
պիկը պի՛րկ դրկել էին նրա մարգված իրանը և
ամբողջութեամբ ցուցադրում էին երիտասար-
դական մարմնի վայրենի գեղեցկութեանը:

Չանգույի կիրճը: Կապույտ ջրերի փրփրա-
բաշ ալիքները դալիս դարձնվում են անագին
ժայռին ու փշրվում նրա խոժոռ հայացքի ա-
ռաջ: Ժայռի վրա նստել է Մարտին Սարինյա-
նը: Նրա մկանուտ մարմինը, որի վրա երևում
են ջրի վճիտ կաթիլները, փայփլում է արևի
տակ: Երիտասարդը ոտքերը կախել է ջրի վեր-
փուրների մեջ, իսկ ինքը ցուցադրելով սպիտակ
ու ամուր ատամները, ծիծաղում է լայն ու ա-
ռաղջ: Սրտիկին թվում էր, թե անա որտեղ որ
է, կլսի նրա ծիծաղի ձայնը, բայց որովհետե
այդ ձայնը նա երբեք չէր լսել, դժվարանում
էր ենթադրել, թե ինչպիսի ելեվեջներ հուշենա:

Անտառ: Ըստ երևույթին Դիլիջանի շրջա-
կայքում: Եղիվնիների անտառակի արևաշող բա-
ցուտի կանաչ խոտերի մեջ թիկն է տվել Մար-
տին Սարինյանը: Նրա ոտքերի մոտ բնկած են
հրացանն ու արնաշաղախ փասջանների մի ամ-
բողջ կապոց:

— Ինչ լայն է եղել մեր կյանքը, — մտա-
ծում էր երիտասարդ աղջիկը, — և ուր է հիմա
այս բոլորը: Ինչպիսի աչքերով է նայել այս
երիտասարդը ապագային և որտեղ է հիմա նա...

Արժիկին մտաբուռներինց հանեց հայրը:

Պրոֆեսոր Երվանդ Լուսինյանը ներս մտավ
օրվա լրագիրը ձեռքին: Աղջկան գահավորակին
պահած տեսնելով, նա աթոռը քաշեց և նստեց
նրա գլխավերևում:

— Ահա տեսնում էք, — սղևորված բացա-
կանչեց նա մատով լրագիրը ցույց տալով, —
ամենքը գնում են, մեր ինստիտուտը վերա-
դարձել է, բոլորը գշավում են իրենց տեղերը:

— Ի՞նչ է պատահել հայրիկ:

— Ահա կարդացեք: Կրասնոդարում կյանքը
վերականգնվում է, ամբողջ ինտելիգենցիան վե-
րադարձել է, բոլոր պրոֆեսորներն ալ դասա-
խոսաները գրավել են իրենց տեղերը...

— Ինչու համար էք այդ բոլորն ասում
հայրիկ, չէ որ դուք համաձայնվել էք մնալ
Երևանում:

— Շատ լավ, բայց ես չեմ կարող...

— Իուք չէք կարող Ձեր շահերը դնել, —

ընդհատեց աղջիկը և բարձրացավ դահավորա-
կից, — իսկ ևս, ևս նույնպես սիրելի հայրիկ,
չեմ կարող չգիտակցել իմ շարհերը: Իմ շահերը
կապված են Երևանի հետ...

5.

Առավոտից Արփիկը իրեն վատ էր զգում:
Գիշերը անցկացրեց ծանր ու անհանդիստ և ա-
ռավոտյան անկողնուց վեր կացավ սաստիկ
զլխացավով: Հայրը նրան դեղեր տվեց, խնդրեց
այդ օրը պառկել անկողնում, բայց Արփիկը
դեղերն ընդունելով սովորական ժամին գնաց
աշխատանքի: Նա հույս ունեւր, որ առօրյա հոդ-
օերի մեջ կմոռանար զլացավը և իր աշխատանք-
ներին վերահասու կլիներ սովորական կարգով:
Իսկ աշխատանքները մինչև կոկորդն էին հաս-
նում: Սկսվել էր մի նոր փողոցի ասֆալտապա-
տում: Եվ ովքեր էին աշխատում փողոցի կարգա-
վորման վրա, նույն փողոցի և մերձակա թաղերի
բնակիչները, բոլոր տնտեսուհիները, պառավ կա-
նայք ու ծերեր, որոնք ուրիշ ժամանակներում
զամբյուղները ձեռքներին միայն շուկա կարող
էին գնալ, իսկ զրանից դուրս նստել պատըշ-

գամներում ու մրափել արևի տակ: Իսկ այժմ
բանը ուրիշ էր: Երկրի երիտասարդ ուժերը
զբաղված էին ազատագրական: Թիկունքի
բնակիչներն իրենք էին անհանգստանում իրենց
քաղաքի ու փողոցների բարեկարգությամբ:

Բայց Արփիկը չնայած սաստկացող գլխա-
ցավին, աշխատանքային օրն անցկացրեց ար-
տասովոր լարվածության պայմաններում: Նա
սկսեց նրանից, որ թունդ հանդիմանեց գլանող
մեքենայի շոֆերին:

— Ինչո՞ւ ես կանգնել, ասֆալտը սառչում
է, — խստությամբ հարցրեց նա:

— Ձի աշխատում, ի՞նչ կարող եմ անել:

— Իսկ ինչո՞ւ թույլ տվեցիր, որ ասֆալտը
սփռեն:

— Այդ իմ գործը չէ, սփռում են, թող
սփռեն:

Շոֆերի հանդիսատսառնասրտությունը տակն
ու վրա արեց շինարարության ինժեներուհու
համբերությունը: Նա վաղուց է նկատել, որ այդ
մարդը ալարկոտի ու դանդաղաշարժի մեկն է և
ուզեց հենց նույն պահին արձակել նրան: Բայց
դառնությամբ հիշեց, որ նրան փոխարինելու

համար ոչ ոք չունի, ուստի բավարարվեց միայն
խիստ սպանալիքներով և այդտեղից չհեռա-
ցավ, մինչև որ մեքենան սկսեց աշխատել:

Փողոցի միջին աշխատամասում հավաքված
հողե բլուրների վրա նստել էին բաներով ու
քլունդներով զինված կանայք և սովորականի
նման շաղակրատում էին: Ինժեներուհուն տես-
նելով նրանք ոտքի կանգնեցին ու քարկեցին
մտերմորեն:

— Ի՞նչ է պատահել, ընկեր զվարդիական-
ներ: Կանանց մեջ մի անասելի աղմուկ բարձ-
րացավ, որից ոչինչ հնարավոր չէր հասկանալ:

— Սպասեցեք, սպասեցեք, — նրանց կանգ-
նեցրեց Արփիկը, աշխարհի վերջը չէ, մեկ-մեկ
խոսեք:

— Չունենք, չունենք, — կանչում էին այս
ու այն կողմից:

— Ի՞նչ չունեք:

— Պատգարակներ: Միայն այժմ Արփիկը
նկատեց, որ կանայք հողը փողոցից դուրս էին
տանում հերթով միայն մի պատգարակով, իսկ
հողը փոխադրող ավտոմեքենա՝ երբ պարտապ
կանգնել էին:

— Իէ, գվարդիակահաններ, էլ մեմն էք սպասում: Ես այստեղացի չեմ, թե չէ իմ սեփական պատգարակը կառաջարկի ձեզ, — աչքի մեկը խորմանկորեն կկոծելով հանդիստ ասաց ինձններուհին: Կանայք միմյանց նայեցին: Առժամանակ բոլորը լուռ էին:

— Իսկ իմ պատգարակը որ բերեմ չի՞ ջարդվի, — միամտաբար հարցրեց հասարակ մի կին:

— Իսկ ինչպի՞սին է նա, ամուր է:

— Ամուր է, ինչպես կաղնի ծառը:

— Իէ բեր ուրեմն, էլ ի՞նչ ես կանգնել:

— Ես ել ունեմ, բայց տուներ մի քիչ հեռու է, — մեջ մտավ նույնպես հասարակ, բայց բարձրահասակ ու դեմքի վրա վաղեմի գեղեցկության հետքերը պահպանած մի ուրիշ կին:

— Այդ ոչինչ, գու մեկին հետդ վերցրու և իսկույն գնացեք պատգարակի ետևից: Այդ աշխատամասից էլ Արփիկը հեռացավ միայն այն ժամանակ, երբ գործի գրեց աշխատանքի եկած բոլոր կանանց և նրանց քուռնգների ու բահերի համերաշխ զնգոցի տակ փողոցը մաքրվեց ավելորդ հողից ու քարից: Փողոցների հատման աշխատամասում Արփիկը դեռ հեռվից իրեն ծա-

նոթ մի կերպարանք նկատեց և մոտենալով,
զարմացած քարացավ տեղում: Մի խումբ կա-
նայք քլունգներով հանում էին փողոցի քարե-
րը, իսկ մի ուրիշ խումբ հանած քարերը դուրս
էր տանում և դարսում պատի տակին: Այդ
խմբի մեջ էր նրա մայրը՝ տիկին Հայկունի:
Նա լուռ ու հանդարտ շարժումներով բարձրաց-
նում էր քարերը, տանում շարտում պատի տակ
և վերադառնալով անտրտուն, ջնույն բանը կրկ-
նում էր առանց որևէ մեկի կողմը նայելու:
Երիտասարդ ինժեներուհու կոկորդը հուզմուն-
քից սեղմվեց: Նա չգիտեր ծիծաղեր, թե՛ լաց
լիներ: Աչքերը իրենք իրենց արտասովակալում
էին և նա հազիվ էր զսպում իրեն, որպեսզի
բարձրաձայն չհեկեկա:

— Մամա, — դողդողացող ձայնով կանչեց նա:
Մայրը անվրդով բարձրացրեց գլուխը, իր բարի
ու հոգացողությամբ լի աչքերը սեևեց աղջկա
վրա, հետո քարը վերցրած կանգնեց:

— Արփի՛կ այդ դ՞ու ես, աղջիկս: Ինչպե՞ս ես
գլխացավդ անցմով:

— Այդ ոչինչ, ոչինչ մամա, — արագ ընդհա-
տեց աղջիկը, — իսկ դու ինչու ես այստեղ: Տի-

կին Հայկուհին նրան չպատասխանեց: Նա տա-
րավ քարը մի կողմ նետեց, վերադարձավ և
ձեռքերը խալաթի փեշով սրբելով ջերմորեն
գրկեց աղջկան,

— Լա՛վ կանեիր տուն գնայիր, աղջիկս,
երեսիդ գուշն չի մնացել:

— Մամա, թող այդ խնդրում եմ: Գու ինձ
ասա ինչո՞ւ ես այստեղ:

— Իսկ այդ քեզ չի վերաբերվում, ընկեր
ինժեներուհի, դու միայն աշխատանքի մասին
կարող ես հարցնել:

— Թող մամա կատակներդ: Ինչո՞ւ ես եկել
այստեղ: Ես արդեն խոսել էի մորիլիզացիոն
բաժնի պետի հետ, նա համաձայնվել էր քեզ
աշխատանքի չկանչել:

— Իսկ ո՞վ է քո այդ մորիլիզացիոն բաժնի
պետը: Նա ինչ իրավունք ունի ինձ աշխատան-
քից ազատելու, ես նրա համար եմ աշխատում,
ի՞նչ է:

— Մամա...

— Տուն գնա, — խստությամբ ընդհատեց
մայրը, — Բոլորովին գունատվել ես... Եվ աղջկա-
նից հեռանալով վերցրեց քառակուսի մի քար, —

Հկարծես թե Երևանը միայն ընդ համար է հա-
րազատ, այն. . . ու օրօրվելով տարավ քարը մի
կողմ նետելու:

Արփիկը արագ քայլերով ու անտրամադիր
անցավ ասֆալտապատվող ամբողջ փողոցի եր-
կարու-թշամբ, տեսնվեց շինարարութեան պետի
հետ ու հայտնելով, որ հիվանդ է, տուն գնաց:

Հայրը աշխատանքից դեռ չէր վերադարձել:
Նա փոխեց վերնազգեստը ու տնային հասարակ,
բայց ճաշակով կարված խալաթով մեկնվեց փա-
փուկ գահավորակի վրա: Երկար ժամանակ գըլ-
խացավից չէր հանգստանում, հետո քնեց: Այդ
պահից որքան էր անցել, նա չգիտեր: Ինչ
ուժեղ թակոցները նրան արթնացրին: Ենթա-
դրելով, որ վերադարձել են հայրը կամ մայրը,
նա շտապելով վազեց դուռը բաց անելու, բայց
այն ինչ տեսավ նա երազ կամ սրամիտ խաղ
թվաց նրան: Ինչը բացելուն պես տիրակաճ ու
հպարտ քայլերով ներս մտավ Մաքրուհի տատը:

— Իբերը հավաքեցեք, տան տերը եկել
է, — ասաց նա հոխորդալի հայացք դրելով Արփի-
կի վրա: Եվ իսկապես դռների մեջ երևաց դիմօ-
վորակաճ համազգեստով մի երթտասարդ, ճախ

կրժքին Կարմիր դրոշի շքանշան: Նա թեթևակի
կազարով մտնեցավ ցնծազին ժպտացող Մաթ-
րուհի տատին և ձեռքը դրեց նրա ուսին:

— Մառսիր տատի, ինչո՞ւ այդպես խիստ, —
ասլա մի քայլ արավ դեպի Մրփիկը, որը անե-
լիքը չիմանալով շփոթված կանգնել էր սենյա-
կի մեջտեղում: Նրանց աչքերը հանդիպեցին
միմյանց: Երկու ջերմ շոգիացնող հայացքները
ողջադուրվեցին օդի մեջ: Իր առջև տեսնելով
սլացիկ կազմվածքով, ճկուն ու շարժուն, ինչ-
պես ուռի դալար ծառը, հմայիչ դեմքով, լեհի-ն-
դրադյան ձևով կտրած մազերի խոպոպները
ուսերին շող տված, տնային հասարակ խալա-
թով այդ աղջկան՝ երիտասարդ զինվորականին
թվաց, թե իր կրժքի տակ ինչ որ մի բան
շարժվեց, որը հեռավոր կանչի նման ցնցեց
նրան...

— Թույլ տվիք ծանոթանալ, — դուրալի թավ
ձայնով ասաց նա, միաժամանակ նկատելով, որ
աղջիկը իր ձայնը լսելիս կամացուկ փակեց աչ-
քերը ու դլուխը փոքր ինչ ևս ձգեց: Բայց այդ
միայն մի ակնթարթ:

— Ինժեներ — կապիտան Մարտին Մարին-
յան: Նա թեթևակի սեղմեց աղջկա ձեռքը:

... Եվ այս տան օրինական տՅրը, — թույլ
ու դողողուն ձայնով հարցրեց Արփիկը ներ-
քուստ գայրանալով իր անհեթեթ թուլության
վրա:

— Ոչ: Այս տան նախկին բնակիչը: Տունը
պետությանն է պատկանում:

— Այդ միևնույնն է: Արփիկ Լուսինյան,
ինժեներ, բայց ոչ կապիտան: Շատ ուրախ եմ
Ձեզ հետ ծանոթանալու համար: Ձեր իրերը որ-
տե՞ղ են, թույլ տվե՞ք ներս բերել: Արփիկը
ուզում էր միջանցք դուրս գալ, բայց Մարտին
Մարինյանը կանգնելու նշան արեց:

— Ներեցեք ինձ, ես մտադիր չեմ Ձեզ ան-
հանգստացնելու, — վճռական տոնով ասաց նա, —
տեղավորվեցե՞ք ինչպես Ձեզ հարմար է, ես
ուրիշ տեղ եմ ապրելու... Նա շուռ եկավ որ
գնա: Արփիկը կանգնել էր շփոթված ու զար-
մացած: Մաքրուհի տատը դուրս էր եկել չեն-
թադրելով, որ դեպքերն այդ կերպ կդասավորվեն:

— Ո՛ւր էք գնում, — նվազած ձայնով
հարցրեց Արփիկը:

— Ընկերներին մոտ, կամ հյուրանոց:

— Իզուր, Ձեր սենյակը բոլորովին ազատ է:

— Աչի՜նչ, ոչի՜նչ մի անհանգստանա, ինձ համար մի ուրիշ տեղ կճարվի: Սարի՜նյանը դարձյալ գնալու ջարժում արավ:

— Սպասեցեք,— այս անգամ արդեն հրամայական ու ազդու կանչեց աղջիկը,— Ձեզ նման երիտասարդին վայել չէ այդպես վերավորել շատ հարգելի մի ընտանիքի:

— Ներեցեք ինձ, բայց ես չեմ կարող...

— Երևի ուզում էք, որ մենք ազատենք Ձեր սենյակը, այդ նույնպես հնարավոր է: Մեզ համար նույնպես տարելու տեղ կգտնվի, միայն սպասեցեք մի՛նչև ծնողներս վերադառնան:

— Ինչ էք ասում, իմ ինչի՜ն է պետք բնակարանը, ես արձակուրդ եմ եկել, ջուտով վերադառնալու եմ իմ գորամասը: Ես միայն Ձեր մասին եմ մտածում:

— Մեծապես շնորհակալ եմք... Գրան ճռուցից Արփիկը շուռ եկավ և նրա դեմքը բոպեպես պայծառացավ: Նա զգաց, որ իր ուսերից մի մեծ ծանրությունն ընկավ:

— Ահա և հայրս, նա Ձեզ կխրատի,— Արփիկը ընդառաջ գնաց հորը,— հայրիկ եկել է մեր տան տերը:

— Տեսնում եմ, տեսնում,— պրոֆեսորը
անշտապ կախեց լաշնեզը զլխարկը ու թաշկի-
նակով դեմքը սրբելով, մտակցավ երիտասար-
դին,— շատ ուրախ եմ երիտասարդ, շատ ուրախ
եմ...

— Հալրիկ նա գնում է: Պրոֆեսորը հոն-
քերը վեր քաշեց և խփուովեց:

— Ո՞ւր:

— Նա գնում է հյուրանոց,

— Թողեք խնդրեմ, երիտասարդ հերոս: Ապա
մոտ նստեք, պատմեցեք ռազմածակատից... Օհ, ու
այդ ինչ է, կազմում էք,— պրոֆեսորը նստած
տեղից բարձրացավ,— աջ ոտքից: Հանեցեք, հա-
նեցեք կոշիկը, անմիջապես հանեցեք, ես ուզում
եմ տեսնել:

Սարինյանին այլևս սչինչ չեր մնում, քան
ենթարկվել: Նա նստեց դահավորակին, անհար-
մարությունից ու ցավից քրտնելով հանեց եր-
կաբաճիտ կոշիկը և մերկացրեց աջ ոտքը:

Պրոֆեսորն ու նրա աղջիկը թեքվեցին գե-
պի երիտասարդը:

6.

Սարինյանը դարձավ Լուսինյանների ամ-

բողջ ընտանիքի հոգաարության անարկան
Որքան էլ նա անհարմար զգար, որքան էլ
ենչվեր այն մտքից, որ իր վիճակով մեծ հոգ-
սեր է պատճառում պատվելի այդ ընտանիքին,
այնուամենայնիվ չէր կարող չնկատել այն մեծ
բարեկամութունը, որը հաստատվել էր իր և
այդ մարդկանց միջև:

Նա ամբողջ հագով սիրեց ու հարգեց պրո-
ֆեսոր Երվանդ Լուսինյանին, որի մեծահոգու-
թյունն ու բարեսրտութունը նա նկատեց նրանց
շրջանում ապրելու հենց առաջին օրերից: Ըն-
տանեկան խաղաղ զրույցների ժամանակ, երբ
տիկին Հայկունին նրա խոսքերը լսում էր գո-
րով-օլից ժպիտներով, ճաշերի ու ընթրիքների
ժամանակ, երբ տիկին Հայկունին անհանդուսա-
սում էր երիտասարդի վատ ախորժակի համար
և նրան ընտրովի պատաներ էր առաջարկում,
ամեն օր ու ամեն ժամ նրան թվում էր, թե
այդ իր մայրն է, որը ստվերի թեթև քայլերով
հետևում է իրեն և իր մայրական բարի, քընք-
շազին հովանավորությամբ խափանում ամեն
չար ու փորձանք:

Իսկ Արփիկը: Նրա մտտին մտածելիս Սա-

րինյանի դիմքով տրամաթյան թեթև շղարշ էր
սահում: Ի՞նչն էր դրա պատճառը: Նա աչարդո-
րոշ ոչինչ չգիտեր: Միայն նրան թվում էր, թե
հանդիպման հենց առաջին օրը, երբ նա սեղմեց
աղջկա ձեռքը, դրանով էական մի բան թելա-
դրեց կյանքին: Նա առաջին անգամն էր աղջկան
տեսնում: Բայց նա միայն աչքերով չտեսավ
նրան: Նա ուրիշ կերպ տեսավ: Նրա մեջ ամեն ինչ
շարժվեց և ցնծաց...

Պատահեց այնպես, որ արդեն երկրորդ շա-
բաթում Մարտին Սարինյանի դրուժյունը
ծանրացավ: Խավար դիշերին ընկերոջ տանից
վերադառնալիս նեղ նրբանցքում նա անդգու-
շուժյամբ ընկավ փոսի մեջ, ոտքում սուր ցած
զգաց և տուն դալով պառկեց: Առավոտյան նա
չկարողացավ վեր կենալ: Նրա աջ ոտքի վրա
բացվել էր հին վերքը և արյունահոսություն
սկսվել:

Լուսինյանները սաստիկ անհանգստացան:
Արփիկն անընդհատ փոխում էր վիրակապերը,
մայրը շփոթված գես ու գին էր ընկնում: Միայն
պրոֆեսորը ոչ մի վարչական չկորցրեց հոգու-
արթությունը: Ճիշտ է առաջին պահին նա կապ-

կածեց, որ գործը կարող է արյան վարակումով
վերջանալ, բայց հենց այս միտքը նրան օգնեց
հանգիստ ու անվարան աշխատել: Իր գլխավո-
րած զինվորական հիվանդանոցից նա վիրաբուժ
և քույրեր կանչել ավից ու նրանց օգնութ յամբ
դադարեցրեց սպանալի արյունահոսութ յունը:
Ճմրող ժամանակ լուռ ու համբերատարու-
թ յամբ պառկած Մարտին Սարինյանը, որի
գեմքը նկատելիորեն դունստովել էր, երկաս-
ասարդութ յան խորը դժացումով էր գիտում իր
նոր բարեկամներին, որոնք մեծ սիրով ու ան-
կեղծորեն ցանկանում էին իրեն օգնել: Երբ
վերքը խնամքով փաթաթեցին և արյունը դա-
դարեց, պրոֆեսորն զգուշութ յամբ այն դրեց
բարձի վրա և ձեռքերը շփելով նստեց Սարին-
յանի գլխավերևում:

— Ահա բոլորը երկասասարդ: Ձեր անզգու-
շութ յունը Ձեզ հաճար երկու շաբաթ մեջքի վրա
հանգիստ պառկելու հարմարութ յուն ստեղծեց:

— Երկու շաբաթ, — անհանգստացավ Սա-
րինյանը:

— Ուղիղ երկու շաբաթ և ոչ մի բույե
պակաս:

Նրիտաարդի դունաթափ դեմքը մոայլվեց,
նա երեսը շուռ տվեց դեպի պատը:

— Պրոֆեսոր, — փոքր ինչ լռելուց հետո
խոսեց նա, — ինձ հիվանդանոց փոխադրեցեք,
խնդրում եմ:

— Ի՞նչ, — հոնքերը վեր քաշեց Լուսինյանը:

— Հիվանդանոց:

— Արդելում եմ խոսել, — ոտքի կանգնելով
բարկացած գոչեց պրոֆեսորը, — արդելում եմ
խոսել և շարժվել: Նա կորուկ քայլերով դուրս
եկավ միջանցք, լվացվելու:

— Մարտին, մենք Ձեզ կխնամենք... Թեք-
վելով դեպի տղան, քնքշաբար շնջաց Արիիկը:
Աղջկա տաք շունչը բալորովին հուզեց Մարին-
յանին, նրա կոկորդը սեղմվեց:

— Ձեզ համար դժվար կլինի, — խղված ձայ-
նով շնջաց նա:

— Ինչպե՞ս չեք ամաչում, Մարտին, — հան-
դիմանեց աղջիկը:

— Չխոսել, նրա հետ ամենեին չխոսել, —
սրբիչը ձեռքին ներս մտնելով բարկացած կան-
չեց Լուսինյանը, — նա թող նայի վերև և առաս-
տաղին ճարտարապետական նախագծեր նկատ

րի... պրոֆեսորը արագ հագնվեց և վիրաբուժի
ու կանչված քույրերի հետ դուրս գնաց:

Թե ինչպես անցավ այդ երկու շաբաթը,
Սարինյանը ինքն էլ չիմացավ: Երբ ոտքի
կանգնեց նրան թվում էր, թե քաղցր մի քնից
է արթնացել: Ամբողջ ժամանակամիջոցում նա
ոչնչի կարիք չգտաց: Արփիկը ամեն ինչ անում
էր, որպեսզի նա չձանձրանա: Հենց միայն աղ-
ջրկա նեղ կայո թյուներ նրա աշխուժ, ազատ, ան-
կաշկանդ ու խելացի գրույցները Սարտին Սա-
րինյանին կապում էին հայտնագործված մի
նոր կյանքի հետ, որը հետզհետե նրան կլա-
նում էր:

Տիկին Հայկունին ամենամեծ հոգածու թյուն
էր ցուցաբերում նրա սննդի նկատմամբ: Շատ
հաճախ նա դանադան համեմ, ևնքներով պատ-
րաստված այնպիսի կարկանդակներ էր առա-
ջարկում, որ Սարինյանին թվում էր, թե իր
կյանքում ինքը նման համեղ բան երբեք չի
կերել:

Իրեն ասպետի պես էր պահում պրոֆեսոր
Երվանդ Լուսինյանը: Արտաքուստ խիստ և
չոր, ինչպես նա սիրում էր իրեն ցույց տալ

հիվանդներին, բայց ներքուստ վերին սասի-
ճանի մարդկային նրա բնավորությունը վա-
ղուց արդեն Սարինյանի համար դարձել էր սի-
րելի: Նա մտերիմ զրույցի խաղաղան վարպետ
էր, ծիծաղով ու սրամտություններով լի նրա
զրույցները հոգեկան մեծ բավականություն էին
պատճառում երիտասարդին: Նա դրեթե ամեն
օր ստիպում էր Սարինյանին պատմել Կուբանի
մարտերի մասին և այն մասին, թե ինչի հա-
մար է ինքը շքանշան ստացել: Եվ երբ երիտա-
սարդը հասնում էր այն կետին, երբ մեր դոր-
քերը գրոհով վերցրին Կրասնոդարը, պրոֆեսսո-
րը ռաքի էր կանգնում, մտածկոտ անցուդարձ
անում սենյակով և ալեխառ բեխերը շփելով ա-
սում էր մտածկոտ:

— Հմայիչ քաղաք է Կրասնոդարը: Միրում
եմ նրա արևը, նրա լայն և ուղիղ փողոցները,
նրա ծառաստանները: Ոչ, ես կգնամ և շատ
շուտ կգնամ:

Ո՞ւր, հարցնում է Սարինյանը:

— Կրասնոդար:

— Իսկ Երևանը:

— Հենց այդ է կաշկանդում ինձ: Մի ուրիշ

տեղից ես վաղուց չված կլինեի, իսկ Երևանը...
Ինչո՞ւ ես այսպես կապվեցի Երևանի հետ:

— Գիտե՞ք ինչու:

— Ոչ չգիտեմ:

— Ճիշտ է: Եվ չեք էլ կարող գիտենալ, —
ուզեվորված բացակահանում էր Սարինյանը, — ես
նույնպես չգիտեմ: Ինչե՞ր ասես, որ ես չեմ անի
Երևանի համար, ինչքան եմ ես սիրում Երևա-
նը, իսկ ինչո՞ւ համար: Չգիտեմ: Բայց սիրում եմ:

— Իսկ ես անպատճառ կգնամ, — մրմնջում
էր պրոֆեսորը:

— Իսկ դուք, հարգելի պրոֆեսոր, ոչ մի
տեղ չեք գնա:

— Պատճառը:

— Երևանի շահերը այդպես են պահանջում:
Իսկ իմ շահերը

— Հույսով եմ, որ ձեր շահերը նույնպես
այդպես կպահանջեն... Սարինյանը աչքի ծայ-
րով նայում էր Արփիկին և զգում, որ նա հա-
ճույքով է լսում իր խոսքերը: Այդ սրտապըն-
դում էր նրան:

*
**

Աստղագիտարանի մոտ նրանք նստեցին
հանգստանալու: Նրանց գլխավերևում շրջում

էին ապիտակ աղայիաները: Պարակը եղերող
թփուտներից տերևների երազային շշուշ էր
տարածվում, որը տարտամ միօրինակու-
թյամբ հալվում էր իրիկնային կապույտ մթնա-
շաղում:

Մարտին Սարինյանը կարծես ինքնամոռա-
ցության մեջ ընկած, ձեռքերը լայն տարածեց
նստարանի հենափայտերի վրա և աչքերը կիսա-
խուփ ու գլուխը թեթևակի ետ գցած, դանդաղ և
ցածրաձայն արտասանում էր Վահան Տերյանի
բանաստեղծությունները: Արփիկը լուռ լսում էր
նրան: Բնության հրաշագեղ պատկերները կար-
ծես նրանց տրամադրում էին հրապարակ հա-
նելու երիտասարդական սրտերի երազային իղ-
ձերը:

Փոքր ինչ նստելուց հետո, նրանք թեան-
ցուկ անցան պարակով և դուրս եկան Ս.բովյան
փողոց: Համալսարանի շենքի առաջ կանգնած
տղաների ու աղջիկների մի խումբ, որ մինչ
այդ լուռ էր, հանկարծ պռթկաց առողջ ու
զնգուն ծիծաղով: Երևի տղաներից մեկը սրա-
միտ բան էր պատմում: Վարակիչ ծիծաղը ան-
ցավ նաև երիտասարդ զույգին:

Գետառի կամուրջն անցնելիս նրանք մի
պահ կանգ առան: Ջրերում լողացող հրեխանե-
րի ազմուկն ու սուր ճչոցները միախառնվում
էին գետի ջրերի շաշուշառաչին և ձորը թնդում
էր զվարթ ձայներից,

Նեղ արահետով նրանք բարձրացան Նորքի
այգիները: Հոգնելով նստեցին արահետի վրա
աճած լայնատերև ընկուղենու տակ: Դիմացի
այգու զանկապատին նստել էր փոքրիկ մի աղ-
ջիկ: Նրա կողքին դրված էր ծիրանով լի կողո-
վը: Մարտինը ձեռքի նշանով կանչեց աղջկան
և նա ահագին կողովը գրկած բերեց դրեց նրանց
լստաջ:

— Անուշդ թնչ է, փոքրիկ աղջիկ, — հարց-
րեց Մարտինյանը:

— Օֆիկ:

— Հավանում եմ, լավ անուն է: Ծիրանը
ձեր այգո՞ւյցն է:

— Այո:

— Ինչ տանք, որ այս ամբողջը ուտենք:

— Ինչ կտաք տվեք:

Աղջկա պատասխանը նրանց շատ դուր եկավ,
իսկ ծիրանը առավել ևս: Նրանք մեծ հաճույ-

քով ընտրում և մեկը մյուսին հյուսարասիրում
էին խոշոր, հուժաղի ու քաղցրահամ ծիրան-
ներով:

Սյգիների վրա շնկշնկում էր ամառային
դով հովը: Ընկուզենու տարտամ խշշոցը թմրեց-
նող ու հաճելի ներք էր տարածում: Վերևում
շների հաշոց ու հետո հիշոցներ լսվեցին: Սա-
րինջանք առանց հաշվելու մի քանի մեծ թրդ-
թաղթամ տվեց աղջկան և Արփիկի հետ վերև
բարձրացավ: Երբեմն արահետը հատվում էր
մեծ-մեծ քարածայռերով կամ ցածրիկ ցանկա-
պատերով: Մարտինը, թեպետ ոտքի վերքից
դուևս թեթևակի կազալով, հեշտությամբ էր
անցնում այդ արգելքները և աղջկան օգնում,
նույնը անելու: Բավական բարձր մի ցանկա-
պատից Արփիկը դժվարանում էր իջնել: Մար-
տինը ներքևից բանեց նրա ձեռքը և աղջիկը այն
է ուզում էր ներքև ցատկի, երբ ոտքի տակի
քարը դուրս սահեց և նա ամբողջ իրանով ըն-
կավ տղայի ուսերին: Ինչպես պատահում է
աչդպիսի դեպքերում, նրանք իրենց համար
անսպասելի կերպով գրկախառնվեցին և ընկան
կանաչների մեջ...

Նորքի սարալանջի ամենաբարձր կետում
մի բարդենի է կանգնած: Քաղաքից երևում է
այդ բարդենին: Նրանք նստեցին երկնասլաց
այդ ծառի տակ փարթամորեն աճած խո-
տերի վրա: Նրանց հայացքների առաջ իր ամ-
բողջ վեհաթյամբ փռված էր Երևանը: Գործա-
բանային թաղամասի սպիտակ շենքերը, Արա-
բառայան լայնածավալ դաշտի երեկոյան կապույտ
մթնաշաղի մեջ միտիառնվել էին Մասիսի ձյու-
նափայլ գագաթներին: Թվում էր, թե Երևանը,
տարածվում է մինչև հեռու հորիզոնը: Սքան-
չելիորեն գեղեցիկ է Երևանը, երբ այն գիտում
ես Նորքի վեհանիստ բարձունքից: Հոյակապ շեն-
քերի պանորամաները, կանաչ ծառաստանները,
ասֆալտապատ լայն փողոցները, որոնք աղամ ու
սլացիկ սկսվելով լեռնալանջերից, կորչում են
հեռուներով ընկած գանգրաներ ծառերով այդի-
ների մեջ: Գործարանների լայնանիստ կորագուռ-
ները, այս բոլորը բաց ու արձակ սահում էին
երիտասարդների զմայլված հայացքների առաջ:
— Ահա իմ հարազատ Երևանը, — ներքևում
փռված քաղաքը ցույց տալով, շշմարտեց Սարիմ-
յանը:

— Նա հարազատ է և ինձ համար, — գլուխը
տղայի ուսին իջեցնելով մեղմությամբ արձա-
գանքեց աղջիկը: Նրանց գլխավերևում օրորվում
ու շրշում էր կանաչ բարդենին: Սպիտակ մի
արագիլ վերադառնալով Արաքսի հովտից ծանր
պտույտներով իջավ մոտակա շենքի կտուրին:

Նրանք բարդենու տակ նստել էին լուռ ու
զմայլված և մտադրադ ահանջ էին դնում քա-
ղաքի հավասար ու հզոր հեվոցներին, որոնց մեջ
պարզորոշ լավում էին տրամվայների ուրախ
դնդդնդոցները: Քաղաքը հանգարտ հանդիսա-
վորությամբ ընկղմվում էր երեկոյի մշուշապատ
անհունության մեջ:

Լեռներից ցուրտ քամի փչեց: Սարինյանը
ժակետը քաշեց Արփիկի ուսերին: Աղջիկը
սեղմվեց նրան և բարձրացրեց գլուխը: Սարին-
յանը թեքվեց, Արփիկը կկոցեց աչքերը, ապա
արագ բանալով համարձակ ժպտաց պայծառա-
գեմ տղային ու ասաց:

— Այժմ հայրս կմնա Երևանում:

— Այո, նա մեր հարազատ քաղաքն է:
Նրանց հրատաշոր շրթունքները իրար հանդի-
պեցին:

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՆՈՎԵԼ

1.

Ես կսկիծով եմ նայում այս նկարին:

Սա, դառն ու տխուր հիշողութեան է մի հիանալի կյանքի մասին: Ամեն անգամ, երբ սենյակում մենակ եմ լինում, ներքին, անդիմադրելի մի ուժ ինձ հրում է դեպի այս նկարը և ես դառը խոհերով պարուրված, ժամերով նստում եմ նրա առաջ ու հիշում բոլորը սկզբից:

Ինձ թվում է, որ անհնար է չնայել այս նկարին, ինձ թվում է, որ եթե ես կրակի բոցերի մեջ այրեմ, փոշիացնեմ թղթի այս փոքրիկ կտորը, հիշողութեանս մեջ ոչինչ չի փոխվի: Ինձ համար անհնար է չհիշել նրան:

Երևի ձեզ ծիծաղելի թվան այս խոսքերը: Ներհեցեք: Այս անգամ դուք սխալվում եք: Ինքն իրավունք չունեք մտածելու, որ խոսքը վերա-

բերվում է սիրտ սովորական պատմութեանը,
որի մասին լսելը ձանձրալի է: Սակայն ես
չպետք է հուզվեմ: Ես կպատմեմ, և բանն այս-
պիսով կվերջանա ու սիրտս էլ կթեթևանա:

Մենք նկարգում էինք երեքով: Ես և Երկու
երիտասարդ ընկերներ, որոնց հետ ծանոթացել
էի ծովափնյա քաղաքում: Մեր այս կարճատև
բարեկամութեանն ուղղում էինք հավերժացնել
միասին նկարվելով: Դա լավագույն հիշողու-
թյունը կլինեք ծովափնյա կը պարիսների սովեր-
ներում անցկացրած մեր բերկրալի օրերի մասին:

Այստեղից էլ սկսվեց պատմութեանը: Երբ
ամեն ինչ պատրաստ էր նկարվելու համար,
մեզանից ոչ հեռու դանձող արմավենիների փո-
փուկ սովերից դուրս սահեց նա, սպիտակ մե-
տաքայտ շալք ուսերին պցած, հուշիկ քայլերով
մոտեցավ մեզ, կանգնեց ու մտածեց մի պահ:

— Սպասեցեք խնդրում եմ, տալ մեր լու-
սանկարչին, և շարունակեց խոսքը մեզ ուղղելով:

— Երիտասարդ ընկերներ, խնդրում եմ նե-
րեր իմ համարձակութեանը, թեև մենք ծա-
նոթներ չենք, սակայն իմ կարծիքով այդ չի
խանդարի, որ ես ևս ձեզ հետ նկարվեմ: Այս-
պիսով մենք կձանոթանանք:

Նա խոսում էր ժպտալով, բայց մենք չգիտեինք, թե որիս է պատկանում այդ քաղցր ժպտը:

Նա դունամ էր ու գալկացի՞, սակայն գեղեցիկ էր իր դունատության մեջ: Այն ժամ տեսակ մեզանից մեկը, մեր ուղրախնացի ընկերը հատակեց:

— Մեզ համար շատ հաճելի է ձեզ հետ նկարվել: Ես իմ կողմից հույս եմ հայտնում, որ ձեր գեղեցկութունը կփրկի մեր նկարը, թե չէ, տեսնում եք, ընկերներս ինչ ուղտային գեմ էր ունենա: Ո՛չ, առանց ձեզ, մեր նկարը անպատճառ մի որևէ ծամածուծյուն կ'իջեցնի:

— Խնդրում ենք, խնդրում:

— Հաճույքով կ'նկարվենք ձեզ հետ... վրատվինք մնացած երկուսս:

— Որ այդպես է, որ խնդրում եք, ես կ'նկարվեմ ձեզ հետ... — Խորամանկությամբ ժպտալով եզրափակեց ազդիկը և եկավ նստեց ծառի ստվերում գրված կանաչ նատարանի վրա ու աչքերով մեզ հրավիրեց շրջապատել իրեն: Ու այդպես էլ նկարվեցինք, ընկերական ջերմ մթնոլորտում, կիպարիսների ստվերի տակ, ծով կապուտակ ջրերի մեղմ շաշունի ներքո:

Նկարվելուց հետո ես նրան ասացի.

— Գուք հիանալի ժպտացիք...

Նրա գունաթափ դեմքին երևաց մեղմ ու
թախծուտ ժպիտը, բայց ոչ կարեկցություն հայ-
ցող, այլ սեփական արժանիքն արտահայտող:

— Շնորհակալ եմ: Չքաշվելով պատասխա-
նեց նա:

— Խնդրեմ: Բայց ասացեք, ձեր անունն էլ
այդպես սիրուն է, ինչպես գուք:

— Իմ անունն Աշխեն է, իսկ այդ սիրուն
է, թե չէ, ինձ համար միևնույնն է:

— Աշխեն, դա հիանալի անուն է: Մենք
ծանոթացանք այդպես, պատահական, բայց այս
ծանոթությունը, այս պատահականությունն ինձ
ընդմիջտ կապեց նրա հետ, չնայած մենք միա-
սին անցկացրինք երազի նման կարճ ժամա-
նակը՝ ընդամենը երեսուն օր:

2.

Մենք ամեն օր տեսնվում էինք: Այսինքն
մենք ամբողջ օրը միասին էինք լինում: Նստում
էինք ծառերի ստվերում, կանաչ նստարանների
վրա, կամ իջնում ծովափ և ժամերով դիտում

Չրի հանգարտ ծփանքը, իսկ երբեմն էլ անեղ
աչեկոծությունը:

Ճաշի ժամերին ևս նրան ուղեկցում էի
մինչև իր բնակարանը, իսկ երեկոյան թեյից
հետո, մենք նորից հանգիպում էինք այն կա-
նաչ նստարանի մոտ, կիպարիսների սովերում,
որտեղ առաջին անգամ հանդիպեցինք ու նկար-
վեցինք պատահմամբ: Մի օր նա կանաչ նստարա-
նի մոտ չեկավ, ևս նրան սպասեցի մինչև երե-
կո, բայց նա չեկավ: Ամբողջ գիշերը ևս մտածե-
ցի նրա մասին և ջնեցի միայն լուսադեմին:
Իսկ առավոտյան, նախաճաշից հետո, գնացի
Աշխենի մոտ:

Ինձ առաջնորդեցին ծառուղիներով:

Նա պառկած էր փոքրիկ, արևոտ մի սեն-
յակում: Երբ ևս ներս մտա, նրան գոտա բարձր
արամադրությամբ, սերախ, կենսաբույր և թարմ
Մի բան միայն, որ երբեք չէր փոխվում, դա
Աշխենի դեմքի դժգունությունն էր: Նրա դե-
քից ու ներս ընկած աչքերից տխուր ու դառն
ժպտում էր ինքը—հիվանդությունը:

Իմ կողմը արագ մի հայացք գցելով, Աշ-
խենը դեպի ինձ մեկնեց իր ոսկրոտ ձեռքը: Ես
սեղմեցի նրա ձեռքը: Նա ջերմ ունեք:

Բաց լուսամուտից երևում էր ծաղկած աշ-
գին: Սպիտակ ծաղիկներով խնձորենու մի ճյուղ
օրորվում էր պատուհանի առաջ: Այգու ծառե-
րին նստած մի արտուա գարնանային երգեր էր
գայլալում:

Ինչպես երևում էր, փոստը նոր էր եկել և
նա խորասուզված ընթերցում էր ինչ որ նա-
մակ: Ընթերցելուց հետո նա բաց արեց մի
ուրիշ ծրար, իսկ, ծրարի միջից, մի փոքրիկ
լուսանկար: Ելկար ժամանակ նա զմայլանքով
նայում էր փոքրիկ լուսանկարը: Գետք է, որ
դա հետաքրքիր լիներ, որովհետև Աշխենը,
տարվելով իր լուսանկարով, մոռացել էր ինձ:

— Դուք ներեցե՞ք ինձ, ես մի քիչ տարվե-
ցի, վերջապես նկարն իրենից հեռացնելով խո-
սեց Աշխենը, — նայեցե՞ք:

Ես նայեցի փոքրիկ լուսանկարին: Դա մի
անվարժ լուսանկարչի ձեռքով նկարած բոպեա-
կան նկար էր: Երկու թմբլիկ երեխա, բուրբո-
վին մերկ, մսի մեջ կորած աչքերով, սպիտակ
թաթիկներով ու տոսիկներով, պառկած էին
կողք-կողքի, կանաչների մեջ: Ես ոչինչ չհաս-
կացա և կասկածանքով նայեցի Աշխենին:

— Մի՞թե սրանք...

Նա ժպտաց բանիմաց ժպտով, վերցրեց նկարը, կրթոտ համբուրեց փոքրիկներին և պահեց բարձի տակ:

— Այո, իմ երեխաներն են: Հասկանում եք, նրանցից մեկն աղջիկ է, իսկ մյուսը տղա: Գիտե՞ք, աղջկան իմ անունով են կոչել:

— Ներեցեք, բայց չէ՞, որ դուք... դա ինձ համար բուրրովին մոռթ է:

— Ինչ եք ասում, դե, իհարկե ամուսնացած չեմ, իսկ երեխաներն իմն են... կյանքը ես եմ նրանց շնորհել:

— Տարակուսելի է: Ես ոչինչ չեմ հասկանում:

— Եվ մի էլ պահանջեք, որ ես բացատրեմ ձեզ: Միայն այ թե ինչ: Դուք շրջաններում եք աշխատում, եթե մի օր կմտածեք անցնել Լոս Անջելես, եղեք Քարակուտ գյուղում, և այցելեցեք այս երեխաներին: Իրանով մեր բարեկամությունը հավերժ կլինի: Աշխենը նորից հանեց փոքրիկ նկարը, հրճվածությամբ համբուրեց ու պահեց:

Նամակն ու նկարը այնպիսի բարեբար աղ-դեցություն ունեցան Աշխենի վրա, որ նա մի

քանի որից հետո անկողնուց վեր կացավ և բժշկի
թուշտվությամբ ևս նրան նորից ուղեկցիցի
դեպի ծովափ:

Երեխաների մասին էլ չհարցրի: Ես հաս-
կացա, որ նա իր կրծքի տակ մայրական ան-
հուն գուրգուրանքով թաղցնում է սրբազան մի
գաղտնիք, որը վեհ մտքեր էր արթնացնում նրա
մեջ և, որի գոյությունը թեթևացնում էր սեփա-
կան անձի կորուստը:

Ես այդպես էի հավատացած:

3.

Գարնանը ևս անցա Լոռու սարերով և եղա
Քարակուտ դյուղում: Ես կատարում էի իմ
խոստումը, թեև մի տարի հետո, բայց ճշտու-
թյամբ կատարում էի Աշխենի ցանկությունը:

Ես գնում էի այն երեխաների տունը, որոնց
դիտելի նկարից և Աշխենի սիրավատ պատմու-
թյուններից: Բայց ևս գնում էի նրանց մոտ,
չդիտես ինչու խնդությամբ լցված, անհուն կա-
րոտանքով, ճիշտ այնպես, ինչպես երկար բա-
ցակալությունից հետո հայրն է գնում իր գա-
վակների մոտ:

Ես մի ամբողջ ամիս քաղաքում գնումներ
կատարեցի, այդ սատանան գիտե թե ում երե-
խաների համար: Ես գնեցի բաղձաթիվ խաղա-
լիքներ, մանկական հագուստներ, մի խոսքով
այն ինչ հնարավոր էր տեղավորել ճանապարհ-
հորդական պատկառելի ճամպրուկում:

Ես չէի մտածում այն մասին, որ դրանք
մի ինչ որ անհայտ, կամ գուցե անսպիտան մար-
դու երեխաներ են, որ անհարմար է նվերներով
գնալ մի մարդու տուն, որին ոչ միայն չես ճա-
նաչում, այլև հաճախ վատ բաներ են մտածում
նրա մասին:

Ես գիտեի մի բան միայն: Կատարել Աշ-
խենի ցանկությունը, կատարել սրբան կարելի
է լավ, շքեղ, փառավոր:

Ես եղա Քարակուտում: Ինձ տարան մի
տուն, որը երկու հարկանի էր և կապույտ փեղ-
կերով լուսամուտների ուներ: Ես բարձրացա երկ-
րորդ հարկը: Փոքրիկ պատշգամբում կանգնած
ինձ էին նայում թիկնեղ մի տղամարդ, դեպի
վեր վոլորած, սև բեխերով և դեմքի գուրեկան
արտահայտությամբ դեռափ մի կին: Նրանցից
յուրաքանչյուրի գրկում կար մի երեխա:

Նա գլխաօրկս հանեցի և բաց գլխով խոնարհ-
վեցի այդ պայծառ մանկիկների առաջ:

— Աշխենի երեխաներն են: Հարցրի նրանց:
Անծանոթ մարդը կարծես լավ չհասկանալով իմ
հարցը, մի քայլ մոտեցավ ինձ և զարմացած
հարցրեց:

— Ի՞նչ ես ուզում, ընկեր:

— Աշխենի երեխաներն են, ասում եմ:

— Աշխենի, այ քեզ բան: Իու՞նքս մոտից
ես եկել: Ներս արի ախպեր ջան, աղջի սեղան
պատրաստի, ախր Աշխենի մոտից է եկել...

Անծանոթ մարդու ջերմագին ընդունելու-
թյունը կրկնակի ավելացրեց իմ հուզումը: Իսկ
նրանք, մարդ ու կին, մինչև սեղան պատրաս-
տելը մի հարյուր տնգամ հարցրին Աշխենի
մասին:

— Որտե՞ղ է մեր Աշխենը: Ե՞րբ է գալու
մեզ մոտ: Տես ինչ անուշ գարուն է, կովերը
ծնել են: Ամեն օր մեկի կաթը սեր ենք անում
նրա համար:

Նա կրկին անգամ վերցրե գլխաօրկս և կանգ-
նեցի գլխահակ ու լուռ: Իմ դեմը կանգնել էր
տնատերը և լայն բաց արած աչքերով ախթարթ

նայում էր ինձ: Հետո ձեռքի դանդաղ շարժու-
մով վերցրեց գլխարկը: Նրա աչքերում արտա-
սուքի խոշոր կաթիլներ երևացին:

4.

Կանաչ ընկուզենին խոշոր էր հանդարտո-
ւիս: Նրա լայն տերևների միալար շոուկը տա-
րածվում էր որպես գարնանային իրիկնաժամի
քաղցր մեղեղի:

Կապույտ մթնաշողը փափուկ շերտերով
իջել էր գյուղի վրա: Դեմի սարից գյուղ էր վե-
րադառնում հանրային նախիրը: Խոլմագորյան
կարմրավուն մի կով ծանրորեն իջնում էր նա-
խիրի առաջից: Նրա վզից կախված մի զանգակ
պայծառ դնգոց էր տարածում:

Իջնող նախիրի միջից փոշու գորշ ու թա-
փանցիկ քուլաներ էին բարձրանում: Մենք
նստած էինք ընկուզենու տակ և տանտերը ինձ
պատմեց բոլորը, ինչ գիտեր Աշխենի մասին:

— Էդ պատահեց ձմռանը: Էս մեր ձորե-
րում միայն բուքն էր ոռնում և քամին ավ-
լում, ճանապարհների վրա էր լցնում սարերի
ձյունը: Ամբողջ մի օր ու գիշեր կինս ցավ էր

քաջում, բայց չէր աղատվում: Դեռ գարկվե-
ցինք, դեն գարկվեցինք, ոչ մի ճար չեղավ:
Բժիշկ էր հարկավոր, իսկ ձյունը լցրել էր բոլոր
ճանապարհները: Կինս էլ մի գլուխ գոռում
էր... Ձենը որ ազանջա էր ընկնում սառը քրք-
ախնք էր գալիս ճակատիս: Ճարահատյալ վեր
կացա, ձին թամբեցի, որ գնամ:

— Ո՞ւր: Հարցնում են ինձ:

— Շրջանային կենտրոն, բժիշկ բերեմ:

— Գժվել ես, այ մարդ, գայլերի բաժին

կդառնաս:

— Ինչ ուզում է, թող լինի:

Էլ ոչ ոքի չլեցի: Նստեցի ձին ու գլուխը
բաց թողի:

Աշխենին ես լավ էի ճանաչում: Մի տարի
չկար, որ շրջան էր եկել, բայց որտեղ նրա ա-
նունը լսում էին, գլուխները բարձր էին պա-
հում: Նա մեր բոլորի պարծանքն էր: Շրջկենտ-
րոն հասնելով գնացի Աշխենի տունը, պատմե-
ցի:— Ինձ ձին կարո՞ղ է երկուսիս էլ աանել:

Կնոջս ցավիրն ինձ հիմարացրել էին, էլ
երկար չմտածեցի:

— Կաանի, ասացի նրան:

— Դե հա՛վաքիր, ահա գործիքները:

Մեկ մտքովս անցավ, որ ձին հողմած է,
մեկել, որ մտածում էի, թե կինս կարող է մեռ-
նել... մի խոսքով, ոնց որ թե, մեկը խելքս գըլ-
խիցս վերցրել էր:

Մռթն ընկնելու վրա էր, շրջկենտրոնից
դուրս եկանք: Բուքն էլի երկինք ու երկիր
խրար էր խանում: Չիռ գլուխը բաց էի թո-
ղել, բայց տեսնում էի, որ խեղճ կենդանին գնա-
լով թուլանում է: Չորն իջանք թե չէ, խրվեց
ձների մեջ ու կանգնեց: Գիշեր էր, թնչ գիշեր:
Մռթ, ցուրտ, բքախառն քամի ու չորս կողմից
էլ գայլերն էին ոռնում...

Ձին թողեցինք, իսկ մենք ձների մեջ խըր-
վելով ու դուրս գալով քաշվեցինք քարս փի
տակը: Ամբողջ գիշեր մնացինք բքի մեջ: Մեր
աչքերի առաջ գայլերը ձիուն վայր գլորեցին
ու կերան:

Կուսադեմին կոլանտեսականները մեզ գտան
ու տարան գյուղ: Աշխենն արդեն իրեն վառ էր
զգում:

— Անմիջապես գործի անցնենք, ասավ նա,
եթե ես հիմա հիվանդին չօգնեմ, երկու ժամից

հետո ուշ կլինի: Ես արդեն ջերմ ունեմ: Կան-
չեց գյուղի ուսուցչուհուն, նրա օգնութեամբ
կնոջս օպերացիա արեց և էս երեխաները ծնվե-
ցին: Ես հրկու երեխա ունեցա, իսկ Աշխենը...
մի ամիս պառկեց մեք տանը, ասում էր թա-
քերս մրսել են, հազում էր: Ինչ արինք, չա-
րինք հազը չանցավ:

Օր-օրի վրա նիհարում էր: Քաղաքից բլժ-
իշկներ եկան նայեցին ու գլուխները թափա-
հարեցին ավստասանքով:

Նրան քաղաք տարան...

Տանտերն իր ծնկները երկու ձեռքով դրկե-
լով, կծկվել էր ընկազենու տակ: Որքան պատ-
մությունն իր վերջին էր մոտենում, այնքան
նրա ձայնը գողգողում էր դառնում և կոկոր-
զը խռպոտվում էր խեղդված հեկեկանքներից:
Ի վերջո նա լռեց, թռոճած հայացքը թավարի
անորոշութեան մեջ նետելով: Ընկուզենին թըշ-
շում էր միալաք:

Քաբափի ծայրին նստած մի բու չաբա-
զուշակ կոնչյունով խանգարում էր գյուղի հան-
գիստը: Ճնճողակներին դարանակալած մի կա-

տու, հանկարծակի վստայունով գեպի ընկուզե-
սու բարձր ճյուղերն էր մագլցում:...

Սիրացին վեպ չէ այս: Սա պատմությունն
է մի կարճ, բայց բոցավառ կյանքի: Եվ ես
միշտ հիշում եմ այս պատմությունը, հիշում
եմ, երբ նստած եմ լինում այսպես, այս նկարի
առաջ, պատահական ծանոթության այս թարմ
ու պայծառ հիշատակի առաջ... Այնտեղ նստած
է նա, միշտ մաքուր ու ծիծաղիտ: Դա նրա
կյանքն է, և գրանից է, որ այս նկարը չի թու-
նանում:

1940 թիվ. Կիրովական

ԱՇՆԱՆԱՅԻՆ ՆՈՎԵԼ

Սպիտակ ակացիայից մի տերև ընկավ: Աըմ-
քած ու դեղնագուշն էր տերևը և թվում էր, թե
հուսաճատարեն դողդոջում էր նաև ընկած տեղում:

Բժիշկը վերցրեց ակացիայի ընկած տերևը,
խորն ակնածանքով նայեց նրան և գրեց գրքի
մեջ:

— Մեռավ: լրջությամբ հոգոց հանեց բժիշ-
կը և շարունակեց — Աշունը տարավ նրան...

Ես նայեցի պարտեզի ծառերին: Մի ուռենի
գեռ կանաչ էր, իսկ ակացիաների և բարդիների
վրա արականորեն տեղավորվում էր աշունը:
Մի տերև թուլորեն օրորվում էր իմ գլխավերե-
վում:

— Ինձ թիս սպիի մմսին ես հարցնում, ընդ-
հատված դրույցը շարունակեց բժիշկ Սուրենյա-
նը, — հին բան է...

Սեղանին գրված սկահակից բժիշկը խաղող

վերցրեց: Նրա վերցրած ողկյուղից մի խոշոր
գիլա պոկվեց և սեղանից գլորվեց, հողերի մեջ
ընկավ:

Կյանքում մարդկանց հետ շատ դեպքեր են
տեղի ունենում և դրանցից շատերը մոռացվում
են արագորեն, բայց լինում են նաև դեպքեր,
որոնք, կարծես պատմության համար, իրենց
հետեից սպիներ են թողնում:

Սուրենյանի ձեռքից կախված խաղողի ող-
կույզն իր սակեղույն գիլաներով օրորվում էր
սեղանի վրա և բծիշկը մերթընդմերթ ընդհա-
տում էր խոսակցությունը, որպեսզի քաղցրա-
համ խաղողով թարմացնի բերանը:

— Իմ կյանքում միայն մեկ անգամ եմ
ողբերգություն ապրել, շարունակեց բծիշկ Սու-
րենյանը, — և եթե ես ոչինչ չպատմեմ, այլան-
դակված գեմքիս նայելով կարելի է շատ բան
հասկանալ անցած-գնացած այդ ողբերգությու-
նից:

Մի ծիտ եկավ, նստեց մեր գլխավերևի ա-
կացիայի ճյուղին և ճլվլոցով կոցահարեց թռչ-
նած տերևը: Մեղմ հողմից քշվելով, տերևն ըն-
կավ պարտեզով հոսող առվակի մեջ ու ջրերը

տարան նրան: Մի ճանճ համառորեն պատվում
էր խաղողով վիքը սկահակի շուքը:

— Երբևիցե քեզ ծեծել են, հարցն ինձ ուղ-
ղեց բժիշկը:

— Շատ են ծեծել:

— Հիշում ես ինչ հանդաման քներում:

— Մի քանիսը հիշում եմ, մյուսները ոչ,
մոռացել եմ:

— Իսկ ես մեկ անգամ եմ ծեծվել և երբեք
չեմ մոռանա այդ: Հավանորեն մոռանայի, եթե
հայելու մեջ նայելու հարկ չլինի, բայց մեծ Սու-
վորովի օրինակին հետևելն այնքան էլ հեշտ չէ:

Սուրենյանը փորձեց բռնել սկահակի շուքը
թռչող ճանճին, բայց չհաջողվեց: Նա խաղողի
մի նսր ողկույզ վերցրեց և զարուհակեց:

— Աշուն էր: Մի քանի օր անընդհատ անձ-
րենիք էին թափվում: Երկրի բոլոր ճանապարհ-
ները բռնված էին փախստականներով: Իաշնակ-
ցական՝ Չախչախված «բանակի» մնացորդները
ահաբեկված ու սովահար փախստականներին ոտ-
նատակ տալով, իսկ հաճախ էլ կողոպտելով նրանց
ունեցվածքը, անկարգ ու խուճապահար նահանգ
ընթացում էին դեպի երկրի խորքերը:

Շատերը քաղցից ու սրտից մեռնում էին
ճանապարհների վրա և նրանց գեղի միտերն
էին քարշ տալիս: Կանանց ու երեխաների ան-
թաղ գիակները նեխվում ու քայքայվում էին
առուների մեջ, գետաբերաններում կամ ճանա-
պարհների եզրերին տարածված: Դաշտերում
մարդու միա ուտող շներ էին թափառում: Մար-
դը, որը միշտ իշխել է կենդանիների ու գազան-
ների վրա, իբր հերկայությամբ չէր շփոթեցնում
նաև իսկ կատուներին...

Փախստականների մի փոքրիկ խմբի հետ
մենք աշխատում էինք օր առաջ Ալեքսանդրա-
պոլ հասնել: Ես հայր չունեի: Հայրս սպանվել
էր Սարիզամիջում, առևտակամ բանակի հարձակ-
ման եննց առաջին օրերին: Երեխաների մեջ
ամենամեծը լինելով, փոխարինում էի հորս: Բա-
ցի ինձանից մայրս չորս երեխա ուներ, որոնցից
մեկին ինքն էր զալակում, մյուսին ես, իսկ
երկուսը մի կերպ քարջ էին գալիս ցեխոտ ճա-
նապարհով: Մենք աժապառու էինք եղել: Ոտա-
րորիկ, կիսամերկ, սրտից կարկամած երեխա-
ների հոգսը, փախչող զինվորների, սպանների ու
խմբապետների ձիերի ամբակների տակ ճիլվելու
վատանքը, չգաղափարող անձրևը և անստանելի ցեխը

միայն հուսահատութիւնն էին ներշնչում ինձ:
Մենք հաճախ ստիպված էինք լինում ճանա-
պարհից դուրս գալ: Մի սայլ շուռ էր գալիս և
նրա հետևից եկող բազմաթիւ սայլեր ու ֆուր-
գոններ փակում էին ճանապարհը: Մի խմբա-
պետ, ոչնչից չչփոթվելով, իր ձին քաջարար քա-
շում էր ամբոխի վրա, սպառնալով տրորել բո-
լորին, եթե իրեն անհապաղ փախչելու հնարա-
վորութիւն չտրվի...

Մեր ուտելու պաշարներն սպառվել էին: Վեր-
ջին անգամ մայրս երեխաների մեջ բաժանեց
զարե ալյուրից թխած երկու կլոր բոբոնները և
ինձ մի կողմ տանելով ասավ՝

- Վաղը ուտելու ոչինչ չկա:
- Իսկ մինչև երեկո:
- Նույնպես ոչինչ չունենք:

Իսկ արևը դեռ նոր էր թեքվել դեպի մայ-
րամուտ: Անկարելի էր, որ մինչև մայրամուտ
երեխաները հաց չուզեին: Եվ իսկապես, երեկո-
յան մոտ երեխաներից մեկն հանկարծ լաց եղավ
և հաց ուզեց: Մայրս փորձեց խաբել նրան:

- Հասնենք գյուղ էնտեղ հաց կուտենք:

Գյուղը լեցուն էր գաղթականներով: Բանված

էին և՛ խոտանոցները, և՛ մարագները, և՛ ցան-
կապատերն ու բակերը: Մեզ հաջողվեց տեղա-
վորվել մի խոտանոցում: Արդեն մութն էր: Հող-
նատանջ երեխաները մի քիչ լաց եղան, բայց
ուտելու բան չստանալով, խոտերի մեջ իրար
սեղմված քնեցին:

Անձրևի մի խոշոր կաթիլ ընկավ բժշկի ձեռ-
քին: Նա խոսքն ընդհատելով, գորշ երկնքին
նայեց: Ամպերի տարտամ շարաններն անձայն
ու խորհրդավոր սահում էին մոխրագույն հար-
թության վրա:

Կռուկներին մի երամ դեպի հարավ էր թըռ-
չում: Մի կռուկի հետ էր մնացել և նրա միայն-
նակ, տխուր կռուցը հնչում էր որպես հուսաբեկ
աղերսանք:

Սուրենյանը թաշկինակով սրբեց ձեռքին
ընկած կաթիլն ու շարունակեց:

— Քնելուց առաջ, մայրս որպես դադանիք
ինձ հայտնեց, որ ինքը վաղվա համա, մի հաց
է պահել: Ես անտարբերությամբ լսեցի. նրա
խոստովանությունը, որովհետև լավ գիտեի, որ
այդ հացը ինձ համար չէր և ոչ էլ մորս համար:
Մյուս օրը, դեռ լույսը չբացված, շարունակ-

կեցինք մեր ճանապարհը: Երեխաները անընդ-
հատ լալիս և հաց էին պահանջում:

— Ա՛յ էն թմբի տակը գետ կա, հասնենք
էնտեղ, ջրի կոզքին հաց կուտենք—հեռվում
երեվացող թումբը ցույց տալով ասում էր մայրս:
Երեխաները լացը դադարեցնելով անհամբեր
սպասում էին մինչև կհասնեինք ցույց տված
տեղը: Սակայն այնտեղ գետի նմանվող ոչինչ
չէինք գտնում:

— Ես սխալվեցի երեխեք... մայ, էն քարի
կոզքին աղբյուր կա, էնտեղ հաց կուտենք: Հաս-
նում էինք քարին՝ աղբյուրի հետք անգամ չկար:

— Զորացել է: Ա՛յ, էն ծառի տակին համ
ջուր կա, համ կանաչ, էնտեղ կնստենք հաց կու-
տենք: Ծառը նույնպես կանգնած էր միայնակ
և առանց ջրի: Ես, իհարկե, հասկանում էի, որ
մայրս այդպիսով ժամանակ է շահում, որպեսզի
իր պահած գարե բոքոնը միայն կեսօրին բաժա-
նի: Այդպես էլ եղավ: Կեսօրից բավական անց,
երբ մենք զգալի տարածություն էինք թողել
հետևում, հանդիպեցինք մի ծառի, որի մտա-
պետնի տակից զուլալ ջրեր էին դուրս հորդում:
Մայրս նստեց և սովահար երեխաները շրջապա-
տեցին նրան:

Ես նրանցից հեռու նստեցի: Ինձ համար
ամօթալի էր մասնակից լինել այդ խղճուկ պա-
տառի բաժանմանը:

Ճանապարհով մի ձիավոր էր գալիս: Դա մի արապարգ բան չէր, որովհետև այդ ճանապարհով նույնիսկ մինիստրական կառքեր էին փախչում: Բայց ինձ անհանդատացրեց այն, որ ձիավորը մտնե՞նալով ծառին, ձին կանգնեցրեց:

Ես իսկույն ճանաչեցի նրան: Դա գաղնակացական բանակի մի սպա էր: Նրա ջուղը մի շաբաթ առաջ անգամ մեր գյուղով, որն ըստ երեւում էր ինձ հանդիպելով տաճկական զորքերին, գլխավորն ջախջախվել էր: Այդ էր վկայում նրա միայնակ փախուստը...

— Հանց է... Անսովոր ձայնով հարցրեց սպան:

Սպայի ազահ հայացքն ու գրգռված ձայնը շփոթեցրին մորս և նա վախվեցելով հացը կըրծեցին սեղմեց:

— Հանց... Նորից փնչաց սպան և մինչ մայրս կորոշեր անելիքը, նա արագորեն ձիուց վայր թռավ, մորս ձեռքից խլեց գարե բոքոնն ու դեպի ձին նետվեց: Երեսաները այս որ տեսան, այնպիսի սոսկալի ծվծվոց բարձրացրին, որ ամենամանդա մարդն անգամ կխղճահարվեր:

Ես նետվեցի սպայի հետևից և մինչ նա կփորձեր նստել, բռնեցի նրան:

— Երեսաների հացը հետ տուր:

— Ի՞նչ հաց, ի՞նչ բան, բաց թող:

— Երեսաների հացն է, դու խիղճ չհանես:

Սպան մի ոտքն արդեն դրել էր ասպանդախի վրա և պատրաստվում էր ձիու մեջքին թռչել, բայց ես կանչելով նրա շորերից, քաշքշում էի ու բարձրաձայն հայհոյում: Հանկարծ նա արագորեն շուռ եկավ: Հացն այլևս նրա ձեռքին չէր... Այդ որ տեսա թվում էր, թե խելագարվեցի: Անզոր կատաղությամբ հարձակվելով հափշտակիչի վրա, ուզում էի կպչել նրա կողորդից և ատամներով խեղդել նրան: Բայց նա ուժեղ էր և ճարպիկ: Թևերիցս բռնելով վեր բարձրացրեց և դեմքիս վրա դետնին խփեց...

Երբ աչքերս բաց արի, պառկած էի ծառի տակ, աղբյուրի կողքին: Իմ գլխավերևում մայրս էր հեկեկում և սավահար երեխաները դեռ լաց էին լինում: Կողորդումս դառն արնահոտ էի զգում...

Իսկապես տերևներով ծառի մի ճուղ վշտահար օրորվում էր մշուշապատ աչքերիս առաջ... Ասձրե եկավ:

Խաղաղի սկահակում դեղին գիլաներով մի ողկույզ էր մնացել, Բժիշկը լռությամբ վեր կացավ: Մենք անցանք պարտեզով: Ծառերի մեջ ամենից շատ աղմկում էր մի ծփի:

Մի ակացիա թռչնած տերևներ էր թափում:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԱՐԴՈՒ ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Գարնանամուտին, փականագործութեան վարպետ Ռուբեն Ռուբենյանը հիվանդացավ սուր տեսակի գրիպոսի:

Տուն հրավիրված բժիշկը նրան խորհուրդ տվեց փոխադրվել հիվանդանոց: Բժիշկը ենթադրում էր, որ գրիպոսին կհաջորդի թոքերի բորբոքումը, ուստի հարկավոր էր բժշկական խիստ հսկողութեան տակ լինել:

Հիվանդանոցը միանգամից վարպետին դուր եկավ: Սենյակների լուսավորութեանն ու մաքրութեանը, հիվանդանոցի աշխատողների հոգատարութեանը գեպի մարդիկ, նրան հարազատ թվացին և նրա գրգռված ջղերը հանդարտվեցին ապիտակ սենյակների անդորութեան մեջ:

Հիվանդանոց փոխադրվելուց մի քանի օր հետո, նա իրեն արդեն թեթևացած էր գտնւմ, այնպես որ օրվա որոշ ժամերին, բժշկի թույլտվութեամբ նստում էր լուսամուտի առաջ և ապակիների միջով դեպի դուրս նայում:

Հիվանդանոցի լուսամուտից երևում էր գե-
տը: Գետի պղտոր ալիքները հորձանքելով զար-
նրվում էին կանաչապատ ափերին և փշրվելով
թեթև ցող սփռում մատղաշ կանաչների վրա:

Պայծառ ու արևոտ օրը հրապուրում էր ա-
մենքին: Վարպետը հաճույքով մտածում էր դրախ
պայծառ երկնքի, գարնան ծիլերի և գետի ջրերի
մասին: Նրան թվում էր, թե ինքը սուզվել է
գետի ալիքներում, որոնք փափկորեն օրորում
ու թմրեցնում են մարդու վաստակած մարմինը:

Ռուբեն Ռուբենյանին իր մտածություննե-
րից սթափեցրին մի խուճբ երեխաներ, որոնք
գետափի կանաչների վրա վազվզում ու խաղ էին
անում:

Երեխաներն սկզբում ձան էին խաղում: Դրա-
նից ձանձրացան: Ձանը փոխարինվեց չիլիկի
խաղով: Ետևով այդ էլ ձանձրացրեց նրանց:
Այս անգամ նրանք ձեռնամուխ եղան նվիրահան
աթուրմային: Նրանք ճկելով իրենց դալար
իրանները թեթևությամբ թռչում էին նորածիլ
կանաչների մեջ: Նրանք կռանում էին հերթով
և հերթով էլ թռչում մեկը մյուսի վրայից,

Վարպետ Ռուբենյանը ամբողջովին կլանված
երեխաների խաղով, մտքում խրախուսում էր

Նրանց գործողություններն և ինքն էլ սրանց
աւրախանում:

Աթուրման նույնպէս ձանձրացրեց երեխա-
ներին: Նրանք, այլ փոքրիկ շարանճիները հան-
կարծ թողեցին թռիչքները: Վազվզելով գետա-
փով նրանք առես մեկի թելադրանքով, հանվե-
ցին և ճշոցով, աղմուկով, ծիծաղով ու կանչերով
դեպի գետի ալիքները նետվեցին: Ռուբենյանի
հետաքրքրությունը կրկին ավելացավ: Սակայն
երեխաների արարքի մեջ ինչ որ անմտություն
կար և այդ բանը վարպետին անհանգստացրեց:
Նա տհաճորեն թավ հոնքերն իրար հավաքեց ու
անհանգստացած շարժվեց տեղում:

Փոքր ինչ անց Ռուբենյանը նկատեց, որ
երեխաներից մեկը գետի ծանծաղուտում կանդ-
նել ու չեր համարձակվում դեպի թորը գնալ:
Իայց որքան եղավ նրա վախը, երբ շարանճի
ներից մեկը գողունի մտենալով նրան, ետևից
հրեց ալիքների մեջ, իսկ ինքը մի կողմ ցատկեց:

Գետի ահարկու ալիքները մի ակնթարթում
երեխային կլանեցին և թավալելով, իրենց հոր-
ձանքի մեջ առան: Այս բանը տեսնելով երե-
խաները, վախեցած գետից դուրս թռան ու ամեն
մեկը մի կողմ վազելով սկսեցին լացով ու աղ-
մուկով օգնության կանչել:

Ռուբեն Ռուբենյանի Տարնուով անհաճելի
սարսուռ անցավ: Տեսնելով գետում խեղդվող
երեխային, նա մոռացավ և՛ իր հիվանդ օրգա-
նիզմը, և՛ գետի ջրերի սառնությունը, և այն,
որ ինքը միայն ներքնահագուստով է:

Մի րոպե անգամ չտատանվելով նա կա-
տարյալ առողջ մարդու արագությամբ պոկվեց
տեղից ու դուրս սլացավ:

Այդ պահին երեխան վերջին անգամ երե-
վաց ալիքների միջից ու կարծես թե երկրին
հրաժեշտ տալով խորասուզվեց ջրերի սառը ան-
դունդում:

Երբ հիվանդանոցի բժիշկներն ու քույրերը
գետափ հասան, արդեն ուշ էր: Գետափում սպի-
տակին էր տալիս Ռուբենյանի հիվանդանոցա-
յին խալաթը: Գետում մերթ-ընդմերթ երևում
էր մի սև կեռ և ապա սուզվում: Իսկ Ռուբեն
Ռուբենյանի գլուխն էր: Գուրս նետվելով ալիք-
ներից Ռուբենյանը շնչում էր կենսաբար օդը և
կրկին գեպի գետի խորքերը նետվում:

Գետափի երկարությամբ վազվզում էր հի-
վանդանոցի գլխավոր բժիշկը և աղաղակելով
խնդրում, որ հիվանդը ջրից դուրս դա: Իսկ հի-
վանդը համառ էր, ինչպես գետի ջրերը, որոնք
խռալով ու հորձանք տալով խանգարում էին

Երեխայի փրկութիւնը: Նա կարծես չէր լսում
իրեն ուղղված կանչերը և ծանրորեն հեկալով
մաքառում էր անսանձ ջրերի դեմ:

Թվում էր թե Ռուբենյանի փորձերը իզուր
էին անցնում: Մակայն ահա նա նորից սուղից
և դուրս նետվելով ալիքներից վեր բարձրացրեց
ուշակորուս երեխային: Մի ձեռքով նա երեխա-
յին էր բռնել, իսկ մյուս ձեռքով ձեռքում էր
ջուրը ու դեպի ամի լողում: Գետափի մոտ մի
քանի ուժեղ ձեռքեր նրան ու երեխային ջրից
դուրս քաշեցին: Հիվանդանոցի քույրերը իսկույն
Ռուբենին տաք հագուստներ հագցրին, իսկ բժ-
իշկները գրադվեցին երեխային ուշքի բերելով

Ռուբեն Ռուբենյանը նորից իր սենյակում
էր: Նրա դեմքը անբնականորեն կարմրել էր, իսկ
աչքերը անորոշութեամբ նայում էին հագ-
նածորին ու թույլ:

— Երեխան ինչպես է: — Շուտ վալով դեպի
պիսավոր բժիշկը հարցրեց նա:

— Երեխային դուք փրկեցիք: Նա անողջ է:
Բայց դա... Ինչպես երևում էր բժիշկն այնուա-
մենայնիվ բարկացած էր հիվանդի վրա և չէր
կարողանում թաքցնել իր վրդովմունքը:

— Հիվանդ օրգանիզմով ջուրը նետվել... դա
ինքնասպանութիւնն է... Այդտեղ ոչ մի հումա-
նիզմ չկա: Դա խելագարութիւնն է:

— Եթե երեխան փրկվել է նշանակում է լավ է: Տեսնում եք բժիշկ, ես ոչ մի նեղութուն չքաղեցի, իսկ երեխան կենդանի մնաց:

Ռուբենյանը լռեց մի պահ, ապա հիվանդագրին ժպտալով փորձեց կատակել:

— Այդ երեխան հետազայում երևի ի՞նչ կյանքը ծովերի հետ կկապի: Նա նավի կապիտան կլինի...

Սակայն նրա հիվանդագրին ժպտալով արձագանք չգտավ: Նրան շրջապատող բժիշկները լուրջ ու մտահոգ դեմքերով միմյանց նայեցին, իսկ գլխավոր բժիշկը թեքվելով դեպի բժիշկներից մեկը շնչաց:

— Գիշերը ծանր հարված է սպասվում, դուք այսօր մնացեք նրա մոտ: Եվ իսկապես շուտով ջերմութունն այնքան բարձրացավ, որ Ռուբենյանը կորցրեց գիտակցութունը: Ողջ գիշերը, և հետևյալ օրը նա այրվում էր ջերմության մեջ ու գիտակցության չէր գալիս: Նրա մահճակալի շուրջը նստել էին փրկված երեխան ու նրա ծնողները, որոնք երախտագիտությամբ լի հայացքները մի լռակա անդամ չէին հեռացնում հիվանդից:

Երբորդ օրը հիվանդի դրութունը թեթևացավ: Ջերմութունը սրտի շափով իջավ: Նա

սկսեց ճանաչել իրեն շրջապատողներին: Գիտակցութեան գալով նա տառնապով հարցրեց:

— Երեխան ի՞նչ եղավ, երեխան:

— Ես այստեղ եմ քեռի ջան, դու իմ մասին մի մտածի, դու քո մասին ասա, ո՞նց ես...


Հիվանդի վզով փաթաթվելով մրմնջում էր փրկված երեխան, իսկ նրա ծնողները ուրախութեանից արտասվում էին: Վարպետը երեխային մոտ քաշեց և թույլ ձեռքերով շփեց նրա խաբույաշ գլուխը: Նրա աչքերում նույնպես արտասուքներ երևացին:

Անցան օրեր մեկը-մյուսի ետևից:

Փակահագործութեան վարպետ Ռուբեն Ռուբենյանը լիակատար կերպով կազդուրվելով, հիվանդանոցից դուրս գրվեց:

Այնուհետև, ընկերական շրջանում, կամ ծանոթ ընտանիքներում, երբ խոսք էր բացվում այս դեպքի մասին, վարպետը բարեհոգաբար ժպտալով ասում էր:

— Այն ժամանակ, իմ կյանքում ես տաշին անգամ զգացի, որ կատարում եմ սովետական մարդուն արժանի քայլ: Ին ինքներդ ասացեք, սովետական ո՞ր հիվանդանոց էր վարվի:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

է ք

1. «Վիեննական անտառի հեփյաթները» . 3— 24
2. Իմ հարազատ Նրևանը 25— 76
3. Գարնանային Նովել 77— 91
4. Աշնանային Նովել 92—100
5. Սովետական մարդու հպարտությունը 101—107

В. СТАФФИ

„СКАЗКИ ВЕНСКОГО ЛЕСА“

(НОВЕЛЛЫ)

Հ.Յ. 09737

Գրատվեր

Կիբրոսական

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0041723

A ^I
6061

9 7 6 2 5 11.